



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84


12-22

2393

~~879~~

1432

~~1432~~



763 873



10

Handwritten mark or signature

1049

ԵՆԴԿՆՅԵ կատակերգութիւնս թատերական խաղարկութեանց մէջ մեծ համբաւ ունի, և առ հասարակ քննադատք զօրութեամբ խօսած են վրան: Բասին՝ որ իբր ողբերգակ բանաստեղծ այնչափ երեւելի հանդիսացած է՝ և Սեծին Քոստէյլի արժանաւոր անդրանակ և նախանձորդ կանդնելով, ըստ իմիք և քանի մը նկատմունքներով գերադանցած է ալ զանի՝ (1) իր բեղմնաւոր միտքը, նուրբ հանձարը և միանգամայն սուր ու երգիծարան լեզուն այս շինած միակ կատակերգութեանը մէջ կատարելապէս կը յայտնէ: Գառ մ'ունէր ինքը, որմէ կատեալ էր իր գրեթէ բոլոր ապրուստը, և կորսնցնելով զայն՝ (որուն համար կ'ըսէ թէ ոչ ինքը և ոչ իր դատաւորները բան մը չէին կրցած հասկնալ) իբրև բանաստեղծ ուղեց դատաւորներէն վրէժը առնուլ, և թէ ոչչափ իր նպատակին հասաւ՝ այս կատակերգութիւնս կարգացող որ և իցէ մէկը կրնայ վկայել, ուրտեղ թէ դատաւոր, թէ դատախազ և թէ փաստաբան իր կիծու և երգիծարան զըջին մէյմիկ առարկաներ եղած են: Գատաւորին խելացնոր անհեթեթութիւնները, դատաստանական գրութեանց մեծ - մեծ պարկեր առած պատուհանէն վար ցատքելը՝ որպէս զի երթայ դատե, յանցաւոր շունը, անոր ձաղերուն արտասուքը, շան համար կազմուած ատեանը և վրան եղած դատատանը, և սրշտպան ու ամբաստանող փաստաբաններուն բարձրէն թռող ցուրտ և ճամարտակ ճարտարախօսութիւնները (փաստաբանները դատաւորին քարտուղարն ու զոնապանն եղած են, երկուքն ալ հաւաստարպէս տղէտ և անտեղեակ) շիտակը մէկմէկէ աւելի ձեռագաղաթ բաներ են, և Արիստոփանի խիստ յաջող նմանողութիւններ, որուն՝ այս կատակերգութեանս ընթացքին մէջ շատ տեղեր հետեւած է, ինչպէս որ ինքն ալ պարձանօք մը կը խոստովանի:

Մինք ալ, որոյն նշանաւոր կատակերգութիւնը բնադրէն՝ ոտանաւորէ արձակի փոխելով թարգմանելու փոքրիկ աշխատութեան յանձնառու եղանք, յուսալով թէ կրնայ ազգայիններէն ընդունելութիւն զտնել, մանաւանդ այսօրուան օրս՝ որ թատերական գրութեանց այնչափ յարգ կ'ընծայուի, և մէկ կողմանէ ալ թատրոններու միջոցաւ նոյնին ճաշակը երթալով կը տարածուի ու կը յատանայ Հայ հասարակութեան մէջ: Տարակոյս չունիմք որ եթէ "ԴԱՏԱՍԻՐԲԸ" մեր տեսարաններուն վրայ ներկայացուի՞ ուշագիւր հասարա-

(1) Վոսնէյլ Գաղղա Երկովղէը, և Բասին՝ Գաղղա Յ. Բակէրը ըսուեցան:

կութիւնը մեծապէս դո՛՛հ պիտի ըլլայ, իրեն համար ծիծաղելու և զբօսնելու առարկաներ սկզբանէ մինչև վերջը անպակաս գտնելով:

Թէ մեր այս ըսածին ապացոյց՝ և թէ կատակերգութեանս ինչ արժէք ունենալուն վրայ գաղափար մը տալու համար, արժան կը համարինք իբրև հարիւրին մէկ՝ քննադատի մը մէկ համառօտ կարծիքը գնել հոս, որն որ չեմք կարծեր որ չափազանցութիւն մը ըլլայ:

“ Այն հանճարը՝ որ Անտրոմաքի մայրական խանդադատանքը, Հերմիոնի նախանձոտութիւնը և ()րէսդի կատաղութիւնը նկարագրած էր՝ կ'ըսէ այս քննադատը, նոյն հանճարը դարձեալ որպէս թէ զբօսնելով մը՝ “ Արիստոփանի արժանի այս կատակերգութիւնը ստեղծեց. զուարթ, հեշտ, աշխոյժ, առանց բնաւ կնճիռ մը, պռանց խառնաշիոթ հանգոյց մ'ունենալու, նուրբ և կծու քննադատութեամբ լի, ամենաբնական՝ և առաջին տեսարանէն մինչև վերջին տեսարանը հանդիսականին ծիծաղը գրգռող } ու՝ ճով մը պրուած ”:

Սա ալ չմոռնանք ըսելու թէ Մոլիէր՝ որ իրաւամբ հայր կը համարուի կատակերգութեան, ամենէն յառաջ ինքը “ ԻՍՏԱՍԻՐՔԸ ” գովելու պատիւն ունեցաւ՝ մինչդեռ կուսակցութեան ոգին զանիկա իբրև չնչին և անպիտան խաղ մը ցուցընելու կ'աշխատէր:

Հուսկ ուրեմն՝ “ ԻՍՏԱՍԻՐՔԸ ” մեծ առաւելութիւն մ'ալ ունի որ՝ ինչպէս նաև հեղինակը իր մասնաւոր յառաջարանին մէջ կ'ըսէ, անմաքուր և ստորին խօսքերէ ազատ է բոլորովին, մինչդեռ ուրիշ կատակերգութիւններու մէջ հասարակօրէն այնպիսի աղտոտ բացատրութիւններ կը վիտան, և ամէն ժամանակ համեստ ճաշակներու զզուանք պատճառած են ու կը պատճառեն:

Իսպինի “ ԵՍԹԵՐ ” սրտաշարժ ողբերգութիւնն ալ արդէն շատոնց աշխարհաբառ. ոտանաւորի թարգմանած լմնցուցած ըլլալով՝ պատեհ առթի կ'սպասեմք զայն ալ 'ի լոյս ընծայելու:

Մ. ՆՈՒԳԱՐԵԱՆ



ԳՐԱՏԱԿԱՆԻՔ

ԱՊՐԵՐԻՆԻՔԻ ԳՐԱՏԱԿԱՆԻՔ

ԲԱՍՄԵՐ

1668

ՄԱՍԻՆԻՔ

ՏԱՆՏԻՆ, գրատու որ :
ԼԵՆԻՆՏԻ, սրբի հանձնակից :
ՔԵՐԱՆՆՈՒ :
ԻԶԱԳԵԼ Ընթանալի աղիկը :

ԿՈՍՏԱՆՍՆՈՒ :
ԲՐԵՒԻ - ՅԱՆ, գոնապան :
ԷՆՇԻՔԻՆ, բարատու գործ :
ՅՈՒՆԿՈՒՄԱՐ, (Souffleur.)

Տեղաբան է Գաղաղայ Գեղ Ետրի - Ետրեմեթի զի նազարէ :

ԱՐՄԱՐԻՆԻՔ ԵՎՈՒՆԻՔ

ՏԵՍԱԲԱՆ ԱՌԱՋԻՆ

ԲԵՐԻՆ - ԺԱՆ. (Գառառուստական գրատու ինքնաց մեծ օտարակ մը բաշտելով.) Ի՞նչու որ ապագային վրայ վստահողը շատ իննթ է. ուրբաթ ինչպեղող կիշակի կըլայ կ'ըսեն : Գառառուստի մեկը անցած տարի ինձ իր քովն առաւ. Ամիանէն բերել տուած էր զիս իր դոնապանն ըլլալու համար : Անշի բերան բռնոր այս Ատրմանայիները չորս կողմն առնելով քթէս բռնել կ'ուզէին : Խօսք մը կայ թէ "Մարդ զայլերուն հետ ոռնալ կը սորվի" շատ ճշմարիտ է : Թեպէտեւ ինքարտ.

ցի մը, բայց սատանորդի հանած վարածին մէկն էի, և ուրիշներու պէս ես ալ իմ մտրակս կը խաղցնէի : Ամենէն քիչ պարոնները զլիարկինին վար առած էր խօսէին հետս. "Պարոն Բրդի - Ժան, աղնիւ Պարոն Բրդի - Ժան" ըսելով, և ինչ մեծ պարոններ՝ Բայց առանց ստակի պատիւը հիւանդութիւն մըն է. ուստի ես ալ շիտակն ըսեմ, ճիշդ կատակերդ ութեան դըռնապան մը դարձած էի : Պարապ տեղը դուռս կը դարնէին և զլիարկինին վար կ'առնէին. առանց ստակ կ'երցընելու մարդ ներս չէր մտնէր : Գըրամ չի կար մի, գոնապան ալ չիկար և դուռ

խակոյն կը գոցուէր : Իբաւ է որ տի-
րոջս ալ մասն մը կը հանէի : Արբեմն
մէկտեղ հաշուի կը նստէինք , և տու-
նին մամը և չոր խոտը ճարելը ինձ
կը յանձնուէր , բայց ես անկէ բան
մը չէի կորսնցուներ : Այլերջապէս ,
ինչպէս ըլլար ըլլար , եթէ յարդը
հողալն ալ վրաս ձգուէր , դարձեալ
իմ հաշուիս շատ աղէկ ձեռք պիտի տար :
Բայց մե՛ղք . եկու նայէ որ մեր մարդը
սաքով գլխով ինքզինքը իրարուեստին
տուած էր : Ամեն օր դատաստանական
ատենին մէջ առաջին և վերջին մը
նացողը ինքը կըլլար : Շատ անգամ
ալ միս մինակ (շեմ գիտեր թէ լսողը
կը հաւատայ) առանց ուտել խմելու
հոն պատկիլ մնալ կ'ուզէր : Արբեմն
« Պալոն Բերրէն - Տանսէն , կ'ըսէի ի-
րեն , շտկէ շիտակ խօսելով , առաւօտ-
ները խիստ կանուխ կելլես . ո՞վ որ
հեռուն ճամբորդել կուզէ՝ պէտք է
որ իր հեծած ձին խնայէ , կըսէի :
Ահր , իմէ՛ , պատկէ՛ , հանգիստդ նա-
յէ՛ , և գործերնիս հաստատուն բըռ-
նենք՝ կըսէի : Բայց ո՞վ ըսածներուս
մտիկ պիտի ընէր : Այնչափ գիշեր
անքուն մնաց , այնչափ գործ տեսաւ՝
որ կ'ըսեն թէ իր ձայնը մէկ տեսակ
եղեր է : Չեոքէն դայ՝ ամենքնիս ալ
մէկ մէկու ետեւէ դատել կ'ուզէ : Միշտ
լեզուին տակէն անանկ խօսքեր կը
մրմնայ , որոնցմէ բան մը չեմ հաս-
կընար : Ի՛նչ ըլլայ ըլլայ , իւր պաշ-
տօնական երկայն զգեստովը և քառա-
կուսի փեղոյրովը կ'ուզէ պատկիլ : Իր
աղաղաղը օր մը զինքը սովորականէն
քիչ մը աւելի ուշ արթնցնելուն հա-

մար՝ բարկութենէն գլուխը կտրել
տուաւ , ըսելով թէ դատախազին մէ-
կը , որուն գործը գէշ կ'երթար , այն
խեղճ կենդանիին կրծօն կերցուցած
ըլլայ : Այս գեղեցիկ վճռին վրայ ,
մեր դատաւորը զուր տեղը կ'աշխատի ,
վասն զի որդին թոյլ շիտար ամենեկին
որ մէկը անոր հետ գործի վրայ խօսի :
Մեզի գիշեր ցորեկ պահպանել կու-
տայ զայն և խստիւ պահպանել . ապա
թէ ոչ , եթէ ուրիշ կերպով վարուելու
ըլլանք՝ մեր մարդը անմիջապէս ա-
տենան է : Մեր ձեռքէն փախչելու
չափ ճարպիկ է մի՛ այն տեղը Աստուած
պիտէ : Այս իմ կողմէս ալ քունը ը-
սուած բանը չունիմ , ուստի երթալով
ալ կը նիհարնամ , ինծի ալ մեղք չէ՞
մի . ոտքերս կերկնցնեմ շեմ երկնցը-
ներ յօրանջիւէն մէկ կըլլամ : Բայց ,
ո՞վ կուզէ թող հսկէ , ահա իմ բարձս :
Իբաւ որ այս անգամ պէտք է որ քու-
նէս աղէկ մը կշտանամ : Փողոցին մէջ
պատկելով մէկու մը մնաս չենք հաս-
ցընէր ա՛ : Պատուական քուն մը քա-
շենք : (Գետնին շրայ կը դառնի)

ՏԵՍԱԼՈՒՆ Բ .

ԷՆԹԻՄԵ , ԲԸԳԻ - ԺԱՆ .

ԷՆԹԻՄԵ . Ե՛՛՛՛՛ , Բըդի - Ժան ,
Բըդի Ժան .
ԲԸԳԻ - ԺԱՆ . Ենթիմէ : (Մեկ կողմ)
Չիս հարբ խած տեսնելով արդէն վա-
խը առաւ զինքը :
ԷՆԹԻՄԵ . Մարդ , առտու այսչափ
կանուխ փողոցին մէջ ի՛նչ բան ունիս

ԲԸԴԻ - ՃԱՆ. Ի՛նչ, միշտ ժամերով
 ոտքի վրայ կայնել պէտք է, մարդ մը
 պահպանել, և շարունակ անոր պօռալ
 կանչը ըրառութիւնը մտիկ ընել: Ի՛նչ
 չտրնալուք բերան: Քեզի բան մը ը-
 սեմ: Ինձի անանի կուզայ որ այս
 մարդը կախարդ մըն է:

ԷՆԹԻՄԷ. Ի՛նչ կուզէ թող ըլլայ:
 ԲԸԴԻ - ՃԱՆ. Գլուխս քերթելով ը-
 սի իրեն թէ քնանալ կ'ուզէի: Ասոր
 Ի՛նչ պատասխան տայ ազէկ է. «Քը-
 նանալ ուզելուց համար աղերսաղիբդ
 ներկայացուր» բառ ինձի ծանրու-
 թեամբ: Բանին էութիւնը միայն
 պատմցի քեզ: Ես պիտի պատկիմ
 քնանամ: բարի գիշեր:

ԷՆԹԻՄԷ. Ինչպէս. բարի գիշեր:
 Սատանան ~~անոր~~ իս տանի եթէ...
 բայց գուտին վրայօքը ձայն մը կը
 լսեմ:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՏԱՆՏԷՆ, ԷՆԹԻՄԷ, ԲԸԴԻ - ՃԱՆ.

ՏԱՆՏԷՆ. (Պատահանի ջրայ:) Բը-
 դի - Ճան, Ենթիմ:

ԷՆԹԻՄԷ. (Բցիլի - ձօնիւ:) Լճու,
 լճու կիցիք նայի՛ք:

ՏԱՆՏԷՆ. Հոս տեղ միմտի եմ:
 Փնօք Աստուծոյ, ահաւասիկ բանտա-
 պահներս անդամ մը պակտութեան
 մէջ դտայ: Եթէ իրենց ժամանակ
 տամ՝ կրնան անմիջապէս առջևս երե-
 ի լիջնա՛, սս տեղէն ազատելու հա-
 մար շուտով մը ինքզինքս պատուհա-

նէն վար նետեմ: Օ՛րի յիրաւանց.
 դատդ կորսնցուցած ես գուն:

ԷՆԹԻՄԷ. Տէր Աստուած, ինչպէ՛ս
 կը յատկէ:

ԲԸԴԻ - ՃԱՆ. Ո՛հ, պարոն. բո՛ներ
 եմ դձեղ:

ՏԱՆՏԷՆ. Գճող, գո՛ղբ:

ԲԸԴԻ - ՃԱՆ. Ո՛հ, դձեղ աղէկ
 բոնած ենք:

ԷՆԹԻՄԷ. Օ՛ր սեղը կը պոռաք
 և կը կանչվոտէք:

ՏԱՆՏԷՆ. Օղնութիւն, օղնութիւն
 հասէք: Կը մոռննեն զիս:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԼԷԱՆՏԻ, ՏԱՆՏԷՆ, ԷՆԹԻՄԷ,
 ԲԸԴԻ - ՃԱՆ.

ԼԷԱՆՏԻ. Շ՛ում, ջահ մը բերի՛ք:
 Հայր իմ, ասանկ կանուխ ո՞վ գրեղ
 դուրս հանց. Գիշերով ս'ըր կեր-
 թաս:

ՏԱՆՏԷՆ. Գատելու կ'երթամ:
 ԼԷԱՆՏԻ. Եւ դո՞վ դատելու. ամն
 մարդ կը քնանայ հիմա:

ՏԱՆՏԷՆ. Ես չեմ քնանար:
 ԼԷԱՆՏԻ. Աստուած իմ, աս սրչափ
 պարկեր կը կրէ իր վրայ. մինչև
 զանիպանին կապելու տեղերն անգամ
 ունի:

ՏԱՆՏԷՆ. Պարկերու և դատերու
 աղէկ պաշարք մը պատրաստեցի:
 Ես երեք ամիս տուն պիտի չգտնամ:

ԼԷԱՆՏԻ. Եւ կերակուրդ ո՞վ պիտի
 հագայ, հայր իմ:

ՏԱՆՏԷՆ. Եւ կերակուրդ ո՞վ պիտի
 հագայ, հայր իմ:

ՏԱՆՏԻՆ. Գինեղանը կը հոգայ :
ԼԵՆՏՏ. Եւ ո՛ր պիտի քնանաս :

ՏԱՆՏԻՆ. Ատեանը :
ԼԵՆՏՏ. Ձէ, հայր իմ, չէ, ա-
ւելի աղէկ է որ դուրս չելլես . քու
աունդ քնայիր . կերակուրդ ալ տու-
նորդ կե՛ր : Մերջապէս թող բանաւո-
րութիւնը համոզէ զքեզ, և տողջու-
թեանդ համար . . .

ՏԱՆՏԻՆ. Ես հիւանդ ըլլալ կու-
զիմ :

ԼԵՆՏՏ. Ըրդէն իսկ հիւանդ ես ,
հայր իմ . Կարճոյդ քիչ մը հան-
ցիստ տուր . չե՛ս տեսներ որ կաշի և
սսկոր ես մնայեր :

ՏԱՆՏԻՆ. Հանդիստ մի . սըվոր
նայէ մէյժը . Ի՞նչ, դուն քու հայրդ
քեզի պէ՞ս կարծեցիր : Ի՞նչ, կը կար-
ծես միթէ որ դատաւորի մը բոլոր
դործը ուտելն ու խմելն ըլլայ միայն ,
կամ թէ սիրահարներու դնդին պէտ
փողոցները շահել և կօշիկ հիօցընել .
գիշերը պարահաճեցէս վազել, և օրն
'ի բուն թուղթի նոտիլ : Ի՛հ, տղաս,
ստակը այնչափ դիւրաւ չի վաստկուիր,
վրայիդ ամէն մէկ ժողովները մէյ
մէկ դատավճիտ արժամ են ինձի :
Դուն դատաւորի զուակի պիտի ըլ-
լաս , և դատաւորական պատմութեանս
քեզի ամօթ սեպես : Ո՛հ, մեղք,
մեղք : Ելեր ես ազնուականութիւն կը
ծախես . է՛հ, դուն Տանտէն , իմ
բարեկամս , դուն քու գործքդ նայէ ,
տես սենեկիս և դարանիս մէջ քեզի
նման Տանտէններուն պատկերները .
ամենքնին ալ այդ պաշտօնական հա-
ղուտը հաղան , և աղէկն ալ ան է :

Դատաւորի մը և մարքիպի մը կա-
ղանդչեքները քովէ քով գիր ու մէ-
կիկ մէկիկ բաղբաւէ . սպասէ՛ որ
Գեհեանմբերի վերջը հասնի , այն
ժամանակ կը տեսնես : Ի՞նչ է աղ-
նուական մը . այնպիսի մէկը՝ որ նա-
խասնեակէս անդին չերթար : Քա-
նինէր այն ազնուական սեպուածներէն
տեսած եմ , և խօսքս հոս ամենէն նը-
շանաւորներուն համար է , որք արդա-
րութեան ատեանին մէջ ուրիշ գործք
չեն ըներ , ըսյցեթէ ձեռուներնուն
մէջ փշել ու փշել , վերաբերունիս քը-
թերնուն վրայ , կամ թէ ձեռքերին
դրպանուն մէջ , և վերջապէս կրակին
մտեհնալու համար , կը դան շամփուրս
կը դարձընեն : Ահաւասիկ այս կերպ
կը վարուին այս տեսակ մարդոց հետ :
Ի՛հ, իմ խեղճ տղաս , այս էր քու
հանցուցեալ մօրդ քեզի տուած դա-
սը : Խեղճ Պապօնդղաս . Ափս՛ս ,
երբ որ միտքս կը բերեմ որ մէկ առ-
եանէ անդամ չէր պակսեր . Երբէք ,
քաւ լիցի , դիս միտակ չի թողուց անի-
կայ , և Աստուած գիտէ թէ որչափ
շահեցաւ անանկ ընելէ , թշուառ կի-
նը աւելի կ'ընտրէր մեր գինեղան -
պանդոկապետին անձեռոցները հեռը
տանիլ , քանթէ ձեռուները պարապ
տուն դառնալ . Հարստութիւն ըսած
բանդ ասանկ կը ժողովուի , ասանկ
Գնա՛ աղջէս , դուն միշտ անխելք
պիտի մնաս . մարդ պիտի չըլլաս
դուն :

ԼԵՆՏՏ. Չուր տեղը ժամանակ
կ'անցընես , հայր իմ . Բըզի - Ժան ,
սա տէրդ տուն տար , անխողինին մէջ

պատկեցնւր, գուռ պատուհան զոցէ,
ծակ ու ծուկ չի մնայ ամենին, որ-
պէս զի աղէկ մը տաքնայ:

ԲԸԳԻ - ՔԱՆ. Գոնէ՛ վերը վան-
դակներ գնել տուէք:

ՏԱՆՏԵՆ. Ի՞նչ, առանց ուրիշ կեր-
պական ձեերու զիս պատկելու տա-
նին: Պարոններ, նախ և յտաջ գա-
տալ՝ ճիտ մը ձեռք բերէք թէ պէտք է
քնանամ:

ԼԵԱՆՏԷ. Ըն ժամս գնա՛ պատկէ,
Հայր իմ:

ՏԱՆՏԵՆ. Կ'երթամ, բայց ամենուդ
ալ գլուխը շատ ձիւներ պիտի բե-
րեմ: Չի պիտի քնանամ, չի պիտի
քնանամ:

ԼԵԱՆՏԷ. Ի՛՛՛՛՛, շատ աղէկ, մի
քնանար: Կ'նախ չի թողոք զինքը՝
Գոնէ Լեւթիմէ հոս մնացիր:

ՏԵՍԱԲԱՆ Ե.

ԼԵԱՆՏԷ, ԵՆԹԻՄԷ.

ԼԵԱՆՏԷ. Քեզի հետ առանձին քիչ
մը խօսիլ կ'ուզեմ:

ԵՆԹԻՄԷ. Ի՞նչ, քեզ ալ պահպա-
նել պէտք է:

ԼԵԱՆՏԷ. Ո՛՛՛՛՛, այո՛, պահպանուելու
չատ հարկաւորութիւն՝ կրնամ ունե-
նալ: Ա՛՛՛՛՛, ես ալ հօրս պէս իմ
խենդութիւնս ունիմ:

ԵՆԹԻՄԷ. Ի՞նչ, գատե՛լ կուզես:

ԼԵԱՆՏԷ. (Իջողի տունը ցուցնելով)
Հոն թողունք գաղտնիքը: Կը ճանչ-
նաս այն տունը:

ԵՆԹԻՄԷ. Հասկցայ միտքդ, հատկը-
ցայ: Ուրեմն սէրը այսչափ կանոնի

քու սիրտդ կը վարակէ: Անշուշտ Ի-
զպէլ լի վրայ կուզես խօսիլ: Հազար
անգամ բռած եմ քեզի թէ անիկայ
խելացի է և սիրուն: Բայց պէտք ես
մտածել անգամ մը որ անոր հայրը
պարոն Շիքանոս ինչքերուն մեծ մա-
սը գատերու մէջ վատնելու վրայ է:
Վարդ մնաց արգիօք որուն դեմ գատ
չի բանայ: Այնպէս կը կարծեմ որ ե-
թէ անիկայ չի մեռնի, բոլոր Իրան-
սան արդարութեան ատենը պիտի
կանչէ: Ահաւ ճիշդ իւր դատաւորին
քով տուն բռնեց. մէկը միշտ գատ
վարել կուզէ, միւսը միշտ գատել:
Լը մե՛ծ բան է. հրա՛ջք է մանաւանդ
թէ որ առանց ժողովոյ պատկան, քեզի
և նօտարին դեմ գատ բանալու զոր-
ծըդ լմնցունէ:

ԼԵԱՆՏԷ. Ես ալ քեզի պէս գիտեմ
առանք. բայց բոլոր այս բաներուն
չի նայելով, Իզպէլին համար կը
մեռնիմ:

ԵՆԹԻՄԷ. Ուրեմն կարգուէ՛ հեռք:
Բաւական է որ խօսիս. ատիկայ եղած
գործ մըն է:

ԼԵԱՆՏԷ. Չէ, Լեւթիմէ՛, չէ, այս
գործը կարծածիդ պէս գիւրաւ չի լը-
մըննար: Հայրը վայրենիին մէկն է,
որ զիս չպիտի բնդունի բնաւ: Դա-
տաստանարանի նուիրակ, վարոցաւոր
կամ դատաստանի մէջ պաշտպան ըլ-
լալէն ուրիշ ճար չիկայ անոր աղ-
ջիկը տեսնելու համար: Խե՛ղճ Ի-
զպէլ, արտում տխուր և մարդու
երես չի տեսնելով, տանը մէջ բան-
տարկուած մնացած է: Իր ծաղիկ հա-
սակը ցաւերով կանցունէ. ինչքերը

միշտ դատերու մէջ կարուելու վրայ, և վրան ունեցած սէքս ալ բոլորովին անյոյս: Այժմէ թողունք՝ այն պարոն Շիքանսո բսուածը թշուառ աղջիկը գերեզման պիտի իջեցնեն: Ա՛ստա՛ հովիտան արժանի դատաստանարանի նուիրակ մը չես ճանչնար քնաւ. կամ թէ չես գիտեր այնպիսի վարպետորդի մը՝ որ մեզի ծառայելու համար ճարտարութեամբ նմանեցնէ. յայտնի է որ պէտք եղածը վճարելով իրեն:

ԵՆՔԻՄԵ. Փնտտելու եղիք, այնչափ կայ որ:

ԼԵՆՆՏԻ. Բայց հիմայ կրնանք գանկել:

ԵՆՔԻՄԵ. Ա՛խ, պարոն, եթէ իմ ողորմած հոգի հայրս ողջ ըլլար, քու բանիդ շատ ձեռք տուող մէկն էր: Ուրիշի մը վեց ամսուան մէջ վատը կածը ինքը մէկ օրուան մէջ կը վատըրէր: Գործած բոլոր երեւելի դործքերը ճակատին խորշումութեանցը վրայ կարծես թէ քանդակուած էին: Կուզէիք մի որ ճամբան իշխանապետի մը կողքը կայնեցնէր քեզի, և առանց դժուարութեան զանիկա ձեռքէն առնէր: Այժմէ բոլոր քաղաքին մէջ ՚ի պատիժ քսան խարաղանի հարուած արուէր՝ միշտ տասն և իննը հատ ուտողը հայրս կը ըլլար: Բայց ըսէ ինձի ինչ կայ ընելու. նոյն վարպետին զաւակը չեմ ես ալ: Ա՛մն կերպով քեզի կը ծառայեմ:

ԼԵՆՆՏԻ. Դ՛մն:

ԵՆՔԻՄԵ. Գուցէ դատաստանատան նուիրակէ մ'աւելի աղէկ:

ԼԵՆՆՏԻ. Կրնամ Իգապէլին հօրը դատաստանական կոչման սուա գիր մը տանիլ:

ԵՆՔԻՄԵ. Ա՛ս ալ ինչ է որ:
ԼԵՆՆՏԻ. Կրնամ աղջկան ձեռքը տոմսակ մը տալ:

ԵՆՔԻՄԵ. Ինչու չէ: Ա՛յդ երկու պաշտօններն ալ ձեռքէս կուգայ:

ԼԵՆՆՏԻ. Եկուր իր ձայնը կը լսեսիմ, ուրիշ տեղ մը երթանք այս բանիս վրայ խորհելու:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՇԻՔԱՆՍՕ, ԲԵՆԻ - ՃԱՆ:

ՇԻՔԱՆՍՕ, (ջեր ջար ծուռգառջ):
Ա՛ս Պրիլը, ինձի նայէ, տունը աղէկ պահպանես, ես քիչ մը էն կուգամ. մարդ չթողուս որ վեր ելայ: Ա՛յս նամակս Մէնի թղթատունը խորհէ: Ճագարանոցէս երեք հատ ձաղար ան և աս առաւօտ զիս պաշտպանող պաշտօնեային տար. եթէ իր գրադիրը հոս ներս գայ, գինիէս խմցուր իրեն. Հա՛, սա պատուհանէն կախուած պարկն ալ յանձնես անոր: Ուրիշ բան մնաց մի. — Աղէկ միտքս ինկաւ: Գուցէ չորցած մարդ մը պիտի դայ զիս փնտտէ, որ ինձի իբրև վեկայ կը ծառայէ, և որն որ պէտք ունեցած ժամանակս ինձի համար կ'երդնու: Ա՛նիկա թող ըստասէ իս: Կը վախնամ որ դատաւորս գուրս չըլլէ: Հիմա ուր է նէ ժամը չորս պիտի զարնէ. սուտի երթամ իւր դուռը շալմ:

ԲԸԳԻ - ԺԱՆ. (գուռնց կես - բանա-
նոյ :) Ո՞վ է ան :

ՇԻՔԱՆՕ. Կարելի՞ է տէր դատաւո-
րը հեղ մը տեսնել :

ԲԸԳԻ - ԺԱՆ. (գուռնց գոցեշոյ :) Ո՞չ :

ՇԻՔԱՆՕ. (գուռնց ցարնեշոյ :) Արդեօք
կարելի՞ է պարոն քարտուղարին խօսք
մը դուրսցել :

ԲԸԳԻ - ԺԱՆ. (գուռնց գոցեշոյ :) Ո՞չ :

ՇԻՔԱՆՕ. (գուռնց ցարնեշոյ :) Իսկ
պարոն դոնապանը .

ԲԸԳԻ - ԺԱՆ. Ե՛ս եմ .

ՇԻՔԱՆՕ. Ա՛ն սուրի, ինձի համար
խմէ՛, կ'աղաչեմ :

ԲԸԳԻ - ԺԱՆ. (ստակց տանեշոյ :)

Շնորհակալ եմ, չէն մնաս : (Գուռնց
գոցեշոյ :) Բայց վաղը եկուր :

ՇԻՔԱՆՕ. Ուրեմն ստակա տուր :

Ի՛նչ գէշ եղեր է աշխարհքը . առա-
ջուան ժամանակները դատ , դատաս-
տան ըսուած բաները ինձի ամենեւին
նեղութիւն մը չէին տար . վեց ըս-
կուղը վեց հատ ևս կը վատկցընէր :
Բայց հիմա անանկ կը կարծեմ՝ որ ե-
թէ բոլոր ինչքս տամ՝ մէկ դոնապան
մը իսկ շահելու բաւական պիտի չգայ :
Բայց ի՛նչ կը տեսնեմ . Տիկին տը
Թիմոզէշ կամուսին կուգայ . կերևայ
որ սակադղական գործ մ'ունենա-
լու է :

ՏԵՍԱԼԱՆ Է .

ԿՈՄՍՈՒՇԻ, ՇԻՔԱՆՕ .

ՇԻՔԱՆՕ. Տիկին, ներս մտնելու
հրաման չկայ :

ԿՈՄՍՈՒՇԻ. Պարոն, ձեզի ըսած

չեմ՝ մի որ աս ծառայներս խելքս գրը-
խէս կը տանին : Չանոնք անկողինէն
վերցընելու համար զուր տեղը կը
մըմնամ և կը քըթմնջեմ : Անէն օր
ես պէտք է որ երթամ՝ զանոնք ար-
թընցընեմ :

ՇԻՔԱՆՕ. Բացարձակապէս հարկ է՝
որ փնտռուած ժամանակը տունը չի-
կամ ըսել տայ :

ԿՈՄՍՈՒՇԻ. Կըրկու օր է որ հետը
չեմ կրնար տեսնուիլ :

ՇԻՔԱՆՕ. Հակատակորդս զօրաւոր
ըլլալուն շատ կը վախնամ :

ԿՈՄՍՈՒՇԻ. Ինձի այս ըրածնուն
վրայ՝ ալ պէտք չէ դատ վարել, հէ՛ :
ՇԻՔԱՆՕ. Սակայն իրաւունքը իմ
քննէ :

ԿՈՄՍՈՒՇԻ. Ա՛խ, պարոն, ան ի՛նչ
վճիռ էր որ հանեցին :

ՇԻՔԱՆՕ. Մտիկ ըրէք, կ'աղաչեմ
տիկին, ինքզինքս ձեր կտրելու դա-
տատանին կը յանձնեմ :

ԿՈՄՍՈՒՇԻ. Պէտք է դիտնաք, պա-
րոն, այն Գնդուլթիւնը . . .

ՇԻՔԱՆՕ. Հիմը պզտիկ բան մըն է :

ԿՈՄՍՈՒՇԻ. Պարոն, կեցիք ըսեմ՝
ձեզ . . . :

ՇԻՔԱՆՕ. Ա՛հաւասիկ գործին բուն
էութիւնը : Ասկէ տասն - քսան տա-
րի մը յառաջ, իշու յաւանակ մը մար-
դադետինիս մէջ տեղէն կ'անցնի, և
աղէկ մը ոտքերը երկնցընելով հոն՞ը
լաբուի կը պտակի : Ինձի տուած վե-
նասը պզտիկ բան մը չէր, ուստի ես
ալ բողոք կ'ընեմ՝ գիւղին դատաւորին
և էշն ալ բռնել կըտամ : Քննիչ մը
կը կարգուի, և ինձի եղած վնասը եր-

կու խուրձ խոտի կը կտրուի : Ա՛յ երջա-
 պէս՝ տարիէ մը ետքը դատավճիռը
 կ'ելլէ, և մենք իբրև անիրաւ ատեանէն
 կը վճարուինք : Այլ բողոքեմ ասոր
 վրայ : Այլ մինչդեռ վճիռ մը ձեռք ձը-
 գելու համար ամեն կերպով կաշխա-
 տէինք՝ (սակեղը, տիկին, աղէկ մտիկ
 քրէք կաղաչիմ,) մեր Տրուիքոն բա-
 րեկամը, որ շուտիկին մէկն է, քիչ
 մը ստակ կերպընեւով և խնդիրք ընե-
 լով վճիռ մը ձեռք կը բերէ և ես
 դատա կը վստաւըկիմ : Ասոր վրայ ինչ
 կ'ընէ նենդաւոր թշնամիս . վճուոյն
 դործագրութեանը կ'ընդգիմանայ, և
 կուզէ զայն փճացընել : Աւրիշ գէպք :
 Մինչդեռ դատերնուս հետ կ'իյնայինք
 կ'ելլէինք, հակառակոց կողմս թոյլ
 կըտայ որ իր հաւերը երթան իմ մար-
 դագետինս ճարակուին : Ասոր վրայ
 հրաման ըրի որ ատենին տեղակազիր
 մը շինուի, թէ մէկ օրուան մէջ հաւ մը
 սրչափ խոտ կընայ ուտել : Աստի,
 երկար չընեմ, աս դատա ալ առջի
 դատին հետ կը միանայ : Ա՛յ երջապէս՝
 իրաց այս կացութեան մէջ՝ ժամանակ
 կը տրուի մեզի և դատին որոշումը յի-
 սուն և վեց թուականին ապրիլ հին-
 գին կամ վեցին կը ձգուի : Աորանոր
 ծախքերէ կեւեմ : Ա՛յ ճոական ասա-
 ցուածներ, հակառակ մերժումներ, դա-
 տաստանական քննութիւններ, քրն-
 ճիչներու ծանօթագրեր, դատը ու-
 բիշի վրայ անցընելու թուղթեր, դա-
 տաստանական երեք նախակարգ վճիռ-
 ներ կը պատրաստեմ, դիւանէն ման-
 րամասն տեղեկութիւններ հանել կու-
 տամ, նոր ամբաստանութեան մուր-

հակներ և նորանոր դիպուածոց յիշա-
 տակարաններ շինել կուտամ, նոյնպէս
 և դործոց և եղելութեանց երկար բա-
 րակ արձանագրութիւններ : Պաշտօ-
 նական նամակներ կը բերեմ, և դիմա-
 ցինիս մուրհակները սուտ կը հանեմ :
 Տասն և չորս վճուազիր, երեսուն հատ
 մը դատաստանական կոչում, վեցը
 եօթը նորանոր սաստիկ խնդրուածոց
 դիրեր, հարիւր քսան հատ մը արձա-
 նագրութիւններ, քսան—քսան և հինգ
 պաշտօնանոզական վճիռներ, վերջապէս
 դատավճիռ : Դատը կը կորսնցընեմ
 ծախքերով մէկ տեղ, որ հինգ վեց
 հազար Ֆրանքի մը կ'ելլէ : Արդարու-
 թիւն ընելը այսպէս կըլայ, տասն և
 հինգ—քսան տարիէ վերջը այսպէս
 դատաստան կը կտրուի : Հիմա մէկ ա-
 պաւէն մը կը մնայ ինծի . ելած վճիռ
 մը ետ ձգելու համար օրէնքին թոյլ
 տուած արտաքոյ կարգի ճամբայները
 դեռ բաց են ինծի համար, ուստի
 անձնատուր եղած չեմ սեպուիր : Բայց
 տեսածիս նայելով կարծեմ դուք ալ
 դատ կը վարէք :

ԿՈՄՍՈՒՀԻ . Ա՛յս, ո՛ւր էր, երանի՛
 թէ դատ վարէի :

ՇԻՔԱՆՕ . Այս դործին համար բո-
 լոր ճիգս պիտի թափեմ :

ԿՈՄՍՈՒՀԻ . Ես . . .

ՇԻՔԱՆՕ . Երկու խուրձ խոտ հինգ
 վեց հազար Ֆրանքի :

ԿՈՄՍՈՒՀԻ . Պարոն, բոլոր իմ դա-
 տերս լմնալու վրայ էին . չորս հինգ
 հատ պղտիկ մնացած էին միայն, մէ-
 կը հօրս դէմ, միւսը էրիկիս, և միւս-
 ները զաւակներուս դէմ : Ա՛յս, պարոն,

ԿՈՄՍՈՒՅԻ. Այո՛, պարոն :

ՇԻՔԱՆՕ. Մտիկ ըրէ՛ք : Կ'ըսեմ իրեն . Պարոն . . .

ԿՈՄՍՈՒՅԻ. Այո՛, պարոն :

ՇԻՔԱՆՕ. Կապէ՛ զիս . . .

ԿՈՄՍՈՒՅԻ. Պարոն , ես չեմ ուզեր կապուիլ :

ՇԻՔԱՆՕ. Ա՛ն քեզի ուրիշ մըն ալ :

ԿՈՄՍՈՒՅԻ. Չէ՛ , ամենեին , ես չեմ կապուիր :

ՇԻՔԱՆՕ. Տիկին , այդ ի՛նչ տեսակ բնութիւն է ձեր բնութիւնը :

ԿՈՄՍՈՒՅԻ. Չէ՛ :

ՇԻՔԱՆՕ. Տիկին , չէք զիտեր թէ վերջը սէր պիտի բերեմ :

ԿՈՄՍՈՒՅԻ. Վերջը բերելիք բան չիկայ . կամ դառ պիտի կարենամ վարել կամ պիտի չի կարենամ . սա է :

ՇԻՔԱՆՕ. Բայց . . .

ԿՈՄՍՈՒՅԻ. Բայց՝ պարոն , ես չեմ ուզեր բնաւ որ զիս կապեն . . .

ՇԻՔԱՆՕ. Վերջապէս երբ կ'նկիւր մը խենդութիւնը իր ուղեղին մէջն է :

ԿՈՄՍՈՒՅԻ. Խենդը գո՛ւն ես :

ՇԻՔԱՆՕ. Տիկին . . .

ԿՈՄՍՈՒՅԻ. Եւ ի՛նչո՞ւ զիս կապել :

ՇԻՔԱՆՕ. Տիկին . . .

ԿՈՄՍՈՒՅԻ. Կը տեսնես , ի՛նչպէս կը կակուղնայ :

ՇԻՔԱՆՕ. Բայց՝ տիկին . . .

ԿՈՄՍՈՒՅԻ. Կծիր մարդուն մէկը՝ որ խաբէութենէ զատ ուրիշ գործք չունի , ելեր է ինձ խրատ տալու :

ՇԻՔԱՆՕ. Տիկին :

ԿՈՄՍՈՒՅԻ. Իր էջը գլուխը փարատի :

ՇԻՔԱՆՕ. Համբերութիւնս կը հասցընես :

ԿՈՄՍՈՒՅԻ. Գնա՛ մարդագետինդ պահպանէ :

ՇԻՔԱՆՕ. Մինչև սա տեղս կը բերես հա՛ :

ԿՈՄՍՈՒՅԻ. Ա՛նտակ :

ՇԻՔԱՆՕ. Ա՛խ , ի՛նչո՞ւ վկայներ չունենայի :

ՏԵՍԱԲԱՆ Ը.

ԲԸԴԻ_ԺԱՆ , ԿՈՄՍՈՒՅԻ , ՇԻՔԱՆՕ .

ԲԸԴԻ_ԺԱՆ. Տե՛ս սա աղմուկը , սա գղրգիւնը , որ մեր գրան առջև կը հանեն : Մարդիկ , գայէ՛ք ուրիշ տեղ այսպէս պոռայէք կանչեցէք :

ՇԻՔԱՆՕ. Պարոն Բըդի-ժան , վկայ եղիր . . .

ԿՈՄՍՈՒՅԻ. Որ պարոնը աւանակ մըն է :

ՇԻՔԱՆՕ. Կը լսես , պարոն , այս խօսքը աղէկ միտքդ պահէ :

ԲԸԴԻ_ԺԱՆ. (Կոմսուկիին :) Տիկին , այդ խօսքը բերաննէդ փախցընելու չէիք :

ԿՈՄՍՈՒՅԻ. Իրան , անոր արուած է որ ինձի խենդ ըսէ :

ԲԸԴԻ_ԺԱՆ. (Շիքանոյին :) Խենդ : Ուրիմն իրաւունք չունիս : Ինչո՞ւ պատիւին կը դպչիս :

ՇԻՔԱՆՕ. Ես պատիւի չգուցայ . միայն իրեն խորհուրդ տուի :

ԲԸԴԻ_ԺԱՆ. Վ՛այ , տիկին :

ԿՈՄՍՈՒՅԻ. Այո՛ , ինձի կապել տալու :

ԲԸԴԻ_ԺԱՆ. Վ՛այ , պարոն :

ՇԻՔԱՆՕ. Մինչև վերջը ի՛նչո՞ւ մը տիկ չընեիր :

ԲԸԳԻ_ՃԱՆ. Վ՛ճ, արկին:

ԿՈՄՍՈՒՅԻ. Ո՞վ, ես համբերեմ որ
 մէկը ինձի դէմ ամեղ - ցըփեղ խօսի:

ՇԻՔԱՆՕ. Կտուարարին մէկն է:

ԲԸԳԻ_ՃԱՆ. Լո՛ւ, ատանկ բան
 մի՛ խօսիր:

ԿՈՄՍՈՒՅԻ. Խաբեբայ մը, անդդամ՝
 մը:

ԲԸԳԻ_ՃԱՆ. Լ՛Յ, բաւական է:

ՇԻՔԱՆՕ. Այնպիսի կտուար մը՝
 որ դատ վարելու ալ չի կրնար հա-
 մարձակիլ:

ԿՈՄՍՈՒՅԻ. Ատիկայ քեզի ի՛նչ:

Այդ բանը քեզի ի՛նչ վերաբերու թիւն
 ունի: Շուտիկ ելլայ երեսդ, գարշելի
 մարդ, նե՛նդաւոր, խո՛նվարար, գո՛ղ:

ՇԻՔԱՆՕ. Շատ աղէկ, շատ աղէկ.
 քեզի կը ցույցնեմ հիմայ: Մէկը
 չիկայ հոս. գատաստանատան նուր-
 բակ մը, գատաստանատան նուրբակ
 մը:

ԿՈՄՍՈՒՅԻ. Վարոյաւոր մը, վարո-
 ցաւոր մը:

ԲԸԳԻ_ՃԱՆ. (տառածին:) Իբաւ որ
 գատաւոր գատախաղ, ամէնքը կայել
 պէտք է:

ԱՐԱՐԱՆԾ ԵՐԿՐՈՐԳ



ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԼԵՆՏԻ, ԻՆՊԻՄԵ.

ԻՆՊԻՄԵ. Կեցիր նայինք, պարոն,
 ամէնը ես չեմ կրնար ընել, որովհե-
 տե ես նուիրակ կըլլամ, դուռ ալ
 կարգուած քննիչը եղեր: Ուրիշ բան
 չունիս ընելիք, բայց եթէ պաշտօնա-
 կան զգեստ մը հագնիլ և քիչ մը
 վերջը ետեւս գալ: Ինքզինքդ պահ-
 լու ամէն միջոց պիտի ունենաս: Բու
 խարտեաչ կեղծամդ սեկ փոխէ: Գատ
 վարելը իրենց բան գործ ընող այն
 մարդիկը ո՛ր պիտի ճանչնան զքեզ,
 և ո՛չ քու ըլլալ կամ չըլլալդ գիտեն:
 Լ՛Յ, երբ անոնք Տօրդ քով քըծ-
 նելու կուգան, դուռ այն ժամանակը
 հազիւ գիտես թէ լուսընցած է:

Բայց ի՛նչ կ'ըսես սա պատուական
 դքսուհւոյն, զոր բաղդը ասանկ յար-
 մար ժամանակ մը իմ դէմս հանեց:

Օխ տեսնելուն պէս, իսկոյն խա-
 բուելով և որոգայթին մէջ լինելով՝
 յանձնեց ինձի որ պարոն Շիքանոյին
 գատաստանական ազդարարու թիւն
 մը ընեմ, և անոր ըսած մի կ'քանի
 խօսքերուն համար զինքը ատեան կը
 կանչէ: Կ'ըսէ թէ պարոն Շիքանոն
 զինքը խենդ, կայտելիք խենդ ան-
 ուանած, և ուրիշ շատ մըն ալ թըշ-
 նամանքներ և հայհոյութիւններ ը-
 րած ըլլայ, որոնք՝ ինչպէս գիտես,
 միշտ դատի մը զարդարանքներն են:
 Բայց հազուադէպ և պատրաստու-
 թեանցս վրայ բան մը չես խօսիր.
 Ինտո՛ր է, նուիրակի մը կերպարանքը
 և վրայ գլուխը ունի՛մ մի:

ԼԵԱՆՏՐ. Ո՛հ, կատարելապէս :
 ԷՆԹԻՄԷ. Չեմ գիտեր. այսչափ
 յիայն գիտեմ որ առաւօտունէ տասն
 հոգամ աւելի սիրտ ու հոգի առած
 մի : Ի՛նչ և իցէ, ահաւասիկ դատաս-
 տանական ազդարարութեան գիրը և
 քու նամակդ. Իզատել պիտի ընդու-
 սի զայն, ապահով եղիր : Բայց աս
 պատրաստած դաշնագիրս անոր ստո-
 բադրել տալու համար՝ դուն պէտք է
 որ քիչմըն ետեւս գաս : Դատաս-
 տանական հարցուփորձ ընել կեղծե-
 շով՝ միւս կողմէն հօրը ներկայութեա-
 նը աղջկանը հետ քիրահարութիւնդ
 յառաջ պիտի տանիս :

ԼԵԱՆՏՐ. Բայց չըլլայ որ ամսա-
 կին տեղը ազդարարութեան գիրը
 տաս :

ԷՆԹԻՄԷ. Հոգ մի ըներ. հայրը
 ազդարարութեան գիրը պիտի ընդու-
 նի, աղջիկը սիրոյ ամսակդ : Դուն
 հիմայ քուն մտիր :

(Էթէթէ Իերեայ Իւտուէր Գոտը
 Էն Դոնէ :)

ՃՆՍԱՐԱՆ Բ.

ԻԶԱՊԵԼ, ԷՆԹԻՄԷ.

ԻԶԱՊԵԼ. Ո՞վ է գուռը :
 ԷՆԹԻՄԷ. Բարեկամ : (Մեկ կոցմ :)
 Իզատելի ձայնն է :
 ԻԶԱՊԵԼ. Ո՞վ կուղէք, պարոն :
 ԷՆԹԻՄԷ. Օրիորդ, դատաստանա-
 տան կողմէն պղտիկ ազդարարութեան
 գիր մը բերած եմ, զոր ձեր ձեռքը
 յանձնելու պատիւը կը խնդրեմ որ
 շնորհէք ինձ :

ԻԶԱՊԵԼ. Պարոն, ներեցէ՛ք ինձ,
 ձեր խօսքերէն բան մը չեմ հասկնար :
 Հիմայ հայրս ուր է նէ կուղայ, անոր
 հետ պէտք է որ խօսիք :

ԷՆԹԻՄԷ. Ուրեմն, օրիորդ, հայ-
 րերնիդ տուն չիկայ :

ԻԶԱՊԵԼ. Ո՛չ :
 ԷՆԹԻՄԷ. Օրիորդ, ազդարարու-
 թեան գիրը ձեր անուան վրայ է :

ԻԶԱՊԵԼ. Պարոն, անշուշտ զիս
 ուրիշի մը տեղ կ'առնուք : Ես առանց
 դատ վարած ըլլալու շատ աղէկ գի-
 տեմ թէ մարդուն որչափ սուղի կը
 նստի անիկայ : Եթէ ես որչափ դատ
 վարելը չեմ սիրեր՝ ամէն մարդ ալ
 այնպէս ըլլար, ձեզիպէսնեքը անտա-
 րակոյս ուրիշ պաշտօն մը փնտելու
 պիտի հարկադրուէին :

ԷՆԹԻՄԷ. Բայց թոյլ տուէք . . .

ԻԶԱՊԵԼ. Բան մը չեմ կրնար թոյլ
 տալ :

ԷՆԹԻՄԷ. Բայց կեցիք, բերածս
 ազդարարութեան գիր մը չէ :

ԻԶԱՊԵԼ. Բաջաղանք մտիկ ընելու
 ժամանակ չունիմ :

ԷՆԹԻՄԷ. Նամակ մըն է :

ԻԶԱՊԵԼ. Նամակ՝ ամենե ին :

ԷՆԹԻՄԷ. Բայց կարգացէ՛ք :

ԻԶԱՊԵԼ. Ես հոգ չեմ :

ԷՆԹԻՄԷ. Գիտէ՞ք ուսկից է : Պա-
 րոն . . .

ԻԶԱՊԵԼ. Երթա՛ս բարով :

ԷՆԹԻՄԷ. Լէանարէ՛ն է :

ԻԶԱՊԵԼ. Յած խօսէ. պարոն Լէ-
 անարէ՛ն է :

ԷՆԹԻՄԷ. Տէ՛ր ողորմեա. մինչև
 խօսք հասկըցընելս հոգիս բերանս
 եկաւ. շունչս հատեր է :

ԻԶԱՊԵԼ. Ո՛Տ, պարոն Լյնթիմէ, ներեցէր կ'ազաչեմ: Ափշած մնացած էի ես: Տո՛ւր նամակը:

ԻՆՅՈՒՄԻ. Քիչ մնաց դուռը երեւին պիտի գոցէիք հասցա:

ԻԶԱՊԵԼ. Անանկ մէկ ծպտեր ես՝ որ սփ կրնար գբեղ Քանչնալ: Բայց տո՛ւր, մի երկնցներ:

ԻՆՅՈՒՄԻ. Ուրեմն աղէկ մարդիկնեւրու ձեր դուռը բաց է:

ԻԶԱՊԵԼ. Միբոս կը հատցընես, Լյնթիմէ. տո՛ւր սա զիբը շուտով:

ԻՆՅՈՒՄԻ. Ո՛Տ, ինչ գէշ և անիւծեալ զիր է:

ԻԶԱՊԵԼ. Անանկ է նէ մի տար, չեմ ուզեր: Գնա՛, տոմսակովդ մէկ-ատեղ եա դարձիր:

ԻՆՅՈՒՄԻ. Ա՛յ գիրը. քեզի խաբեցի: Ուրիշ անգամ՝ այդչափ շոյա չըլլաս:

ՏԵՍԱԼԱՆ Գ .

ՇԻՔԱՆՅՈ, ԻԶԱՊԵԼ, ԻՆՅՈՒՄԻ.

ՇԻՔԱՆՅՈ. Ասանկ հա՛, նայէ սրվոր մէյմը. իր խելքովը ուրեմն ես գնդ մըն եմ, խաբեբայ մը, աւանակ մը, Ես իրեն կը շոկեմ: Արդէն դատաստանատան նուիրակ մը անոր պէտք եղած շնորհակալութիւնը մատուցանելու հոգը վրան առած է: Այս տեսակ դործերու մէջ ունեցած ուժիս և յաջողակութեանս համը՝ անգամ մըն ալ թող ան կոմսուհի ըսուածը առնէ: Միբոք շատ պիտի ցաւի եթէ առաջին փորձս ՚ի դերև ևլլայ, կամ եթէ ա-

ռաջ ինքը զիս ատեան կանչէ: Բայց մարդ մը՝ հոս աղջկանս հետ կը խօսի: Ի՞նչ. տոմսակ մը կը կարգայ Խզապիլ: Անշուշտ սիրահար է մը պիտի ըլլայ: Սօտեհանք:

ԻԶԱՊԵԼ. Իբր՛ս կըսես. տէրդ անկեղծ է, կրնամ վստահիլ իր վրայ:

ԻՆՅՈՒՄԻ. Չօրդ պէս անալ քուն ըսուած բանը չունի, և չարաչար կը յուզուի. և քեզի. . . (Շիրտոն տեսնելով:) պիտի ցուցընէ այսօր որ իրեն դէմ գատ վարելու անողուտ բան է:

ԻԶԱՊԵԼ. (Շիրտոն տեսնելով:) Ա՛յ, հայրս է: (Ինթիմիտ:) Արնաս անմիջապէս իմաց աւլ անոնց, որ եթէ մեզի դէմ գատ բանան՝ մինք կրնանք ինքզինքնիս պաշտպանել: (Տոմսակը տեսնելով:) Ահաւասիկ ձեր ազգարարութեան գրոյն եղած պատիւը:

ՇԻՔԱՆՅՈ. Ի՛նչ, աղջկանս կարգացածը ազգարարութեան զիր մըն էր ուրեմն. ո՛Տ, դուն օր մը ընտանեացդ փառքն ու պարծանքը պիտոր ըլլաս. քու ինչքդ պիտի պաշտպանես: Եկո՛ւր իմ սիրուն աղջիկս, իմ հարազատ աւրիւնս. վաղը քեզի դատաստանական իրաւանց վրայ հմուտ թիւններ տուող զիրք մը գնեմ: Բայց աղջիկս, մէյ մըն ալ չըլլայ որ դատաստանական ազգարարութեան գրեթէ իզտես:

ԻԶԱՊԵԼ. (Ինթիմիտ:) Գոնէ այս քանս զրուցէ որ իրենցմէ վախի ատեղ մը չունիմ: Ինծի հաճութիւն պիտի պատճառես, և ձեռքերնուն եկածը թող ետևնին չի ձգես:

ՇԻՔԱՆՅՈ. Աղջիկս, մի բարկանար սիրտդ ամուր բռնէ:

ԻԶԱՊԵԼ, (Էնթիմոնիս:) Մ'նա՛ս բա-
րև, պարոն:

ՏԵՍԱԲԱՆ Գ.

ՉԻՔԱՆՅՕ, ԷՆԹԻՄԷ.

ԷՆԹԻՄԷ, (Ինթերիոր գրեշու վիճակի
մեջ գնեշուջ:) Ա՛րդ, եղածները արձա-
նայրե՛նք:

ՉԻՔԱՆՅՕ. Պարոն, կազաչեմ նե-
րեցէք իրեն. դեռ գատերու մէջ մը-
տած ելած չըլլալուն՝ այս բաները չի
դիտեր, և եթէ կուզէք, ահա՛ հաւ-
քեմ ձեզի կտորուանքները:

ԷՆԹԻՄԷ. Ա՛չ:

ՉԻՔԱՆՅՕ. Ես կրնամ կարգալ, պա-
րոն:

ԷՆԹԻՄԷ. ()՛ն ուրեմն, ես գէշու-
թիւն չեմ ըներ. օրինակը ահա՛ ու-
նիմ քովս:

ՉԻՔԱՆՅՕ. Ա՛հ, ցուցըցած բարե-
սըրտութիւննիդ որչափ մեծ է,
պարոն: Բայց չեմ դիտեր ինչո՛ւ. որ-
չափ որ ձեր երեսը կը նայիմ՝ զձեզ
կենացս մէջ տեսած ըլլալս չեմ յիշեր
բնաւ, թէպէտև շատ նուիրակներ կը
ճանչնամ:

ՉԻՔԱՆՅՕ. Վրաս կրնաք տեղեկա-
նալ, պարոն. ես իմ փոքրիկ պաշտօնս
ձեռքէս եկածին չափ աղէկ կերպով
կը կատարեմ:

ՉԻՔԱՆՅՕ. Այնպէս թող ըլլայ:
Բայց ըսէք ինձ, որո՞ւ կողմէն կուզաք:

ԷՆԹԻՄԷ. Պատուական տիկնոջ մը
կողմէ, պարոն, որ զձեզ կը պատուէ
և ՚ի բոլոր սրաէ կը փափաքի որ իմ
միջնորդութեամբս դաք խօսքով փոք-

րիկ հատուցում մը ընէք իրեն:

ՉԻՔԱՆՅՕ. Հատուցում մը ընեմ ի-
րեն. բայց ես մէկու մը գէշ խօսք
զբուցած չեմ:

ԷՆԹԻՄԷ. Կը հաւատամ, պարոն,
շատ բարի հոգի մը կը կրէք:

ՉԻՔԱՆՅՕ. Աւրեմն ինչ կուզէք
ինձմէ:

ԷՆԹԻՄԷ. Պարոն, ըսի որ տիկինը
կը խնդրէ ձեզմէ որ վկայներու առջև
իրեն պատիւ ընէք, և զինքը խելացի
խոստովանիք, և չէ՛ թէ խենթ կամ
պակաս:

ՉԻՔԱՆՅՕ. Ա՛հ, իմ կոմսուհիս է:

ԷՆԹԻՄԷ. Չեր աղախինն է:

ՉԻՔԱՆՅՕ. Իւր ծառայն եմ:

ԷՆԹԻՄԷ. Շատ բարեսիրտ էք,
պարոն:

ՉԻՔԱՆՅՕ. Այո՛, կրնաք ապահովել
զանի որ դատաստանատան նուիրակ
մը իմ կողմէս ուղածը պիտի տանի
իրեն: Ի՛նչ, միթէ իրաւունքը կոր-
սընցընողը չէ՞ որ տուգանքը պիտի
վճարէ: Բայց կարգանք նայինք ինչ
է երգածը. ԸՏՐ ԸՏՐ ԸՏՐ...: Յունցա-
րի վեցերորդ օրը, Պարոն Հիերոմ Շիրանո՛
ջրդարանութեան ոգւոյ թեշաղրուած, կա-
ղուեշուք իենթ անուանեշուն կամար ջնո-
յակաղ եւ ցացնուական Տիկինն Եօշանա
Քիւտացնը, Կոմսուհի Փիմդէի, Օրդէի
եւ աշն եւ աշն եւ աշն, կը հրամայուի որ
իսկոյն եւ անմիջապէս վերոյիշեալ տիկնոջ
տունը երթայ, եւ հոն բարձր եւ յստակ
ձայնոյ մը, չորս վկայներու եւ Եօտարի
մը առջև. (բ՛՛հ, բ՛՛հ, սպասէ:)
վերոյիշեալ Պարոն Հիերոմ Շիրանոսն դիտի
խոստովանի բացարձակապէս որ ջնոյն տիկինը



մտացի եւ գտտացու թեան տէր կց ճանչնայ . . .
ԼԸ ՊՕՆ: Ըստիկայ ձեր մեծութեան ա-
նունն է:

ԷնթիՄԷ. Ձեր ծառայելու համար:
(Մեկ կողմ): Օձիքնիս ազատելու հա-
մար անամօթութիւնը ձեռք առնելու
է:

ՇԻՔԵՆՕ. Լը Պօն: Երբէք դա-
տաստանական ազգաբարձութեան մը
տակ այս անունը տեսած չեմ: Պա-
րոն Լը Պօն. . .

ԷնթիՄԷ. Հրամայեցէք, պարոն:
ՇԻՔԵՆՕ. Դուն խաբերայ գող
մըն ես:

ԷնթիՄԷ. Պարոն, ներեցէք ինձի,
ես ինստ պատուաւոր մարդ մըն եմ:

ՇԻՔԵՆՕ. Բայց ամենէ խաբերայ
գողը՝ որ Վայենայէն ինչուան Հը-
ռով կրնայ գտնուիլ:

ԷնթիՄԷ. Պարոն, ես զձեզ սուտ
հանելու համար եկած չեմ հոս: Ա-
տոնց փոխարէնը աղէկ մը հատուցա-
նելու բարութիւնը պիտի ունենաք
ետքէն:

ՇԻՔԵՆՕ. Ե՛ս փոխարէն հատուցա-
նեմ: Այտակներով:

ԷնթիՄԷ. Շատ աղէկ մարդ մըն
էք դուք: Ինչպէս որ պէտք է՝ փո-
խարէն մը ընելու պիտի հաճիք
վերջը:

ՇԻՔԵՆՕ. Ե՛հ, գլուխ կը ցաւ-
ցընես ա՛լ: Ա՛հա առ քու հատուցումդ:

ԷնթիՄԷ. Ապահ մը: Գրենք ու-
րեմն: Վերջիշեալ մի եւ ետցն Պարոն
Հիւրոմ Շիքանօ՝ շատ ազատամբութիւններ
ընրջ. ես որ գատաստանասան նուիրակ մըն
եմ՝ երեսիս ոտիկ աղտակ մը իջեցնելու յան-

դրցնելու, եւ մեկ հարուածով գշարկս առ
պահն մէջ նետեց:

ՇԻՔԵՆՕ. (Ոտքով կից մը տաշով):
Աս ալ աւելցուր:

ԷնթիՄԷ. Շատ աղէկ, շատ աղէկ,
ստակը կանխիկ է: Շիտակը ես ալ
մեծ հարկաւորութիւն ունէի: Եւ, ա-
սով աչ գող շըջաշըջ՝ ոտքով կից մը արձա-
կեց: (Բաջաթիւն) Ասկից աչ ցաս, ընրո-
ջիշեալ Հիւրոմը կատարեմ ներկայ գատաս-
տանական արձանագրութիւնս դատուչ ու-
ցեց: (Օ՛ն ուրեմն, սիրելի պարոն,
դուք միշտ շարունակեցէք:

ՇԻՔԵՆՕ. Սրիկայ դքեզ:

ԷնթիՄԷ. Հող չէ. քանի մը գա-
ւազանի հարուածներ ալ թէ որ տաք,
ես աւելի շնորհակալ կըլլամ:

ՇԻՔԵՆՕ. (Գաւազան մը ասնեղով):

Այո՛, այո՛, պիտի տեսնեմ թէ սուի-
կա իրօք ատենի նուիրակ մըն է:

ԷնթիՄԷ. (Գրեցու գիրքի մեջ):

Շուտով, զարկէք պարոն, զարկէք.
անդին չորս զաւակ ունիմ՝ անուցա-
նելու:

ՇԻՔԵՆՕ. Ի՛հ, ներեցէք պարոն,
զձեզ նուիրակի մը տեղ չէի կրնար
առնուլ, բայց վերջապէս ամենէ ճար-
պիկ, և ամենէ աչքըբաց մարդն ալ
կրնայ խաբուիլ: Յուրջացած թշնամա-
կան կասկածիս համար ձեզի հատու-
ցում մը ընելու չեմ դանդաղիր: Ա-
յո՛, դուք ատենի նուիրակ մըն էք,
պարոն, ճշմարիտ նուիրակ մը, ստոյգ
նուիրակ մը: Աս ալ աղէկ գիտցիք որ
ձեր նմանները այնպիսի մարդեր են՝
զորս միշտ յարգած եմ, և իմ հան-
դուցեալ հօրս ձեռքով, Աստուծոյ և

1002
6295

նուիրակներու երկիւղին մէջ մեծցած եմ, պարոն:

ԻՆՔՐՄԻ. Չէ, չէ, այսչափ աժան մարդ չի ծեծուիր:

ՇԻՔԱՆՕ. Պարոն, դատ պիտի չի բանաք, այնպէս չէ:

ԻՆՔՐՄԻ. Ծառայ եմ. բայց անհրճանազան դուժիւն, դաւազանաշարժութիւն, ապտակ, ոտքի կից. առոնք կլոււելիք բաներ չեն, գիտես:

ՇԻՔԱՆՕ. Շնորհք ըրէք, պարոն. աւելի աղէկ է որ զանոնք ինձ դարձնէք:

ԻՆՔՐՄԻ. Հերիք է որ ադ բաները բոլոր եղան ինձի. հազար սկուզի չեմ տար զանոնք:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԼԵԱՆՏԻ, (անկէլ պաշտօնական զգեստով):

ՇԻՔԱՆՕ, ԻՆՔՐՄԻ.

ԻՆՔՐՄԻ. Հա, պարոն քննիչը խիտ աղէկ ժամանակին եկաւ: Պարոն, ձեր ներկայութիւնը հոս հարկաւոր է. ճիշդ այնպէս՝ ինչպէս որ զիս կը տեսնէք, այս պարոնը պատուական ապտակ մը իջեցուց երեսիս:

ԼԵԱՆՏԻ. Քեզի՞ ապտակ մը իջեցուց:

ԻՆՔՐՄԻ. Եյո՞ ինձի, բուն իմ անձիս վրայ խօսելով. նոյնպէս ոտքի կից մըն ալ: Անկից զատ նախատական անունները որ ինձ տուա:

ԼԵԱՆՏԻ. Վկայ ունիս:

ԻՆՔՐՄԻ. Չեոքերնիդ կրնաք այտիս վրայ դնել. իջեցուցած ապտակը դեռ տաք տաք է:

ԼԵԱՆՏԻ. Յանցանքը զորոշուած ժամանակը վրայ հասնուած: Շիտա կը ծանրակիլն գործ:

ՇԻՔԱՆՕ. Վայ գլխուս:

ԻՆՔՐՄԻ. Ասկից զատ, իւր աղջիկը՝ գէթ ինչպէս որ ինքզինքը կ'անուանէ, թուղթերէս մէկը պատառ պատառ ըրաւ ըսելով թէ իրեն հաճուածիւն կը պատճառեսք, և թէ դո՛ւ աչքով մեզի ասպարէզ կը կարդայ:

ԼԵԱՆՏԻ. (Ենթիմեմ): Աղջիկը բեր նայինք. անհրճանազանութեան ոգին այս ընտանիքին մէջ տիրած կերեայ:

ՇԻՔԱՆՕ. (Առանձին): Բացարձակապէս պէտք է որ զիս կախարդած ըլլան, երկուքէն և ո՛չ մէկը չի ճանչնալու ճամբիւր կուղայ:

ԼԵԱՆՏԻ. Ի՛նչպէս. դատաստանատան նուիրակ մը ծեծել. բայց ահա ապտամբը կուղայ:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԼԵԱՆՏԻ, ԻԶԱԳԵԼ, ՇԻՔԱՆՕ, ԻՆՔՐՄԻ.

ԻՆՔՐՄԻ. (Իցողիչին): Կը ճանչնան՞ զանիկայ: Ի՛նչպէս է:

ԼԵԱՆՏԻ. Մօտ եկուր նայինք, օրիորդ: Գո՞նն ես մեր նուիրակին հետ յանդգնութեամբ վարուողը, և բացարձակապէս մեզի ասպարէզ կարդացողը: Ի՛նչ է անունդ:

ԻԶԱԳԵԼ. Իզապել:

ԼԵԱՆՏԻ. Գրէ՛ իզապել: Եւ տարիքդ:

ԻԶԱԳԵԼ. Տասն և ութն:

ՇԻՔԱՆՕ. Քիչ մը բան աւելի է, բայց հոգ չէ:

ԼԵՆՆՏԻ. Երկի ունիմ:

ԻԶԱԳԵԼ. Չէ, պարոն:

ԼԵՆՆՏԻ. Կը խնդան: Գրէ՛ որ
խնդաց:

ՇԻՔԱՆՕ. Պարոն, աղջիկներու
հետ էրիկի խօսք չընենք. դիտէք որ
ատանկ բաները ընտանեկան դաղա-
նիքներ են:

ԼԵՆՆՏԻ. Գրէ՛ որ կ'ընդմիջէ:

ՇԻՔԱՆՕ. Վայ, միտքես ելեր էր:
Աղջիկս, բերնէդ ելելիք խօսքերուն
աղէկ զգուշութիւն ընես:

ԼԵՆՆՏԻ. Հա, ամենեին մի խոռ-
վիր. ուզածիդ պէս պատասխանէ:
Հոստեղ քեզի անհաճոյ բան մը ը-
նելու դիտաւորութիւն չկայ ամենե-
ւին. Բսէ նայիմ այս դատաստանա-
տան նուիրակէն քիչ մը յառաջ թուղթ
մը չընդունեցար:

ԻԶԱԳԵԼ. Այո՛, պարոն:

ՇԻՔԱՆՕ. Ըս աղէկ գնաց:

ԼԵՆՆՏԻ. Այն թուղթը չի կարգա-
ցած խզտեցիր, թէ կարդալէդ վերջը:

ԻԶԱԳԵԼ. Կարդալէս վերջը:

ՇԻՔԱՆՕ. Ըս ալ աղէկ գնաց:

ԼԵՆՆՏԻ. (Ենթիմէին:) Գրելը շու-
րունակէ. (Եջողեցին:) Եւ ինչո՞ւ այն
թուղթը խզտեցիր:

ԻԶԱԳԵԼ. Վախնալով որ հայրս շատ
հոգ չընէ, և կարգացած ժամանակը
արիւնը չի տաքնայ:

ՇԻՔԱՆՕ. Դատաստանէ կը փախ-
չիս ուրեմն, չարաճճի աղջիկ:

ԼԵՆՆՏԻ. Ընանկ է նէ դժկամակու-
թենէդ՝ կամ այն թուղթը գրողները
արհամարհելէդ չէ՛ր որ զայն խզտե-
ցիր:

ԻԶԱԳԵԼ. Պարոն, անոնց դէմ ո՛չ
դժկամակութիւն ունիմ և ո՛չ արհա-
մարհանք:

ԼԵՆՆՏԻ. (Ենթիմէին:) Գրէ՛:

ՇԻՔԱՆՕ. Չեղի կըսեմ՝ որ հօրը
ելած է: Հատ պատուական կը պա-
տասխանէ:

ԼԵՆՆՏԻ. Բայց սակայն բոլոր դա-
տաւորական աստիճան ունեցողներուն
յայտնի առելութիւն մը կամ հակա-
կրութիւն մը կը ցուցընես:

ԻԶԱԳԵԼ. Պարոն, դատաւորական
պատմութեան մը միշտ աչքիս դէշ երե-
ցած էր. բայց այս հակակիր զգա-
ցումս հիմայ երթալով կը նուազի.

ՇԻՔԱՆՕ. Ինչո՞ւ աղջիկ. աղէկ, ա-
ղէկ, թող ըլլայ. ալ կըցածիս չափ
շուտով քեզի կը կարգեմ, միայն թէ
ստակէ չելլեմ:

ԼԵՆՆՏԻ. Ուրեմն արդարութիւնը
գոհ ընել կ'ուզես:

ԻԶԱԳԵԼ. Պարոն, ձեր աչքին դէշ
չերևալու համար ամէն բան կ'ընեմ:

ԵՆԹԻՄԷ. Պարոն, ստորագրել
տուէք:

ԼԵՆՆՏԻ. Եթէ հարկ ըլլայ՝ բո-
լոր այդ զրուցածներուդ վրայ հաս-
տատ պիտի կենանս:

ԻԶԱԳԵԼ. Պարոն, ապահով եղիք
որ իզպիւլ միշտ հաստատ է:

ԼԵՆՆՏԻ. Ստորագրէ: Հիմայ գոր-
ծը ընցաւ: Հապա գուք չէք ստորա-
գրեր, պարոն:

ՇԻՔԱՆՕ. Այո՛, այո՛, յօժարու-
թեամբ. աղջկանս բոլոր ըսածներուն
կոյրդիւրայն ստորագրութիւնս կը
դնեմ:

ԼԷԱՆՏՐ. (Յած Էջադեչին:) Ամէն
բան աղէկ կ'երթայ: Յաջողութիւնը
կատարելապէս իմ իղձերս պսակեց:
Խիստ օրինաւոր գրուած գաշնագիր
մը ստորագրեց և քիչ մը վերջը իր
գրածին վրայ պիտի դատապարտուի:

ՇԻՔԱՆՕ. (Առանձին:) Աղջկանս
ի՞նչ կը խօսի: Անշուշտ անոր խելա-
ցութեանը վրայ զարմացած է:

ԼԷԱՆՏՐ. Մնաս բարով իզատել:
Միշտ այդպէս գեղեցիկ և խելացի ե-
ղի՞ր՝ ամէն բան աղէկ կ'երթայ: Աուր-
բակ, դարձեալ իր տունը ձգէ զինքը
և դուն, պարոն, քալէ:

ՇԻՔԱՆՕ. Ո՞ր պիտի երթանք,
պարոն:

ԼԷԱՆՏՐ. Ետե՛ս եկուր:

ՇԻՔԱՆՕ. Բայց ո՞ւր:

ԼԷԱՆՏՐ. Ետքը կը հասկնաս: Յա-
նուն թագաւորին քալէ՛ կըսեմ:

ՇԻՔԱՆՕ. Ի՛նչպէս:

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԼԷԱՆՏՐ, ՇԻՔԱՆՕ, ԲԸԴԻ_ՃԱՆ.

ԲԸԴԻ_ՃԱՆ. Ինձի նայեցէք, ձեր
մջէն տէրս տեսնող մը եղա՛ւ: Ո՞ր
ճամբէն գնաց. դունէն թէ պատու
հանէն:

ԼԷԱՆՏՐ. Ա՛ն քեզի ուրիշ մըն ալ:

ԲԸԴԻ_ՃԱՆ. Չեմ գիտեր թէ հայր
ու տղայ սատանային ո՞ր ծակը մտեր
են: Մեր դատաւորը ինձմէ դարձեալ
իր դատաւորական վարձքը կը պահան-
ջէր: Այնչափ զլուխս ցաւցուց, այն-
չափ ըրաւ՝ որ ես ալ քիչ մը ձեռքէն
ազատելու համար կծիկը գրի և մա-

ռանը փախայ: Ինքը այս միջոցին հա-
լածուեր է մէջ տեղէն:

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՏԱՆՏԷՆ, (Կանխին մէկ երբի՛ն վրայ:)

ԼԷԱՆՏՐ, ՇԻՔԱՆՕ, ԷՆԹԻՄԷ,
ԲԸԴԻ_ՃԱՆ.

ՏԱՆՏԷՆ. Լուսթիւն, լուսթիւն.
տե՛նքնիդ ալ ձայներնիդ քաշեցէք
հոգ:

ԼԷԱՆՏՐ. Տէր ողորմեա, ան ո՞ւր
ելեր է:

ԲԸԴԻ_ՃԱՆ. Մինչև տանիքը ելեր
է մեր մարդը: Աստուած խելք ասայ:

ՏԱՆՏԷՆ. Ո՞վ էք դուք. ի՞նչ են
ձեր գործքերը. ո՞վ են այս պաշտօ-
նական պատմութեան հագնող մարդի-
կը: Փաստաբան էք, ի՞նչ էք. հա՛,
խօսեցէք նայիմ:

ԲԸԴԻ_ՃԱՆ. Տեսնէք թէ հիմայ
կատուները դատելու պիտի ելլէ:

ՏԱՆՏԷՆ. Քարտուղարիս հետ տես-
նուեցա՛ք: Գացէ՛ք իրեն հարցուցէք
մէյմը թէ ձեր գործոցը վրայ տեղե-
կութիւն ունի՞մ:

ԼԷԱՆՏՐ. Պէտք է որ երթամ զին-
քը այն տեղէն վար իջեցնեմ. դուն
նուիրակ, աչքդ կալանաւորիդ վրայ
ըլլայ:

ԲԸԴԻ_ՃԱՆ. Ա՛յ, ա՛յ, պարոն:

ԼԷԱՆՏՐ. Չայնդ քաշէ՛ և ետե՛ս
եկուր, եթէ ո՞չ հիմայ զլուխդ կը
ճեղքեմ հա՛:

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԿՈՄՍՈՒՀԻ, ՏԱՆՏԻՆ, ՇԻՔԱՆՈ,
ԷՆԹԻՄԷ.

ՏԱՆՏԻՆ. Հուսով, խնդիրքնիդ
ըրէք:

ՇԻՔԱՆՈ. Տէր իմ, առանց ձեր հա-
ւանութեանը զիս բռնեցին:

ԿՈՄՍՈՒՀԻ. Տէր Աստուած, մեր
դատաւորը վերնայարկին մէջ կը տես-
նեմ. ինչ բան ունի հոն:

ԷՆԹԻՄԷ. Տիկին, ունին դրութիւն
կուտայ. ուստի ասպարէզը բաց է
ձեզի համար:

ՇԻՔԱՆՈ. Տէր իմ, զիս կը թշնա-
մանեն, բռնաբարութիւն կ'ընեն, և
ես ձեզի բողբոջու համար կը դայի:

ԿՈՄՍՈՒՀԻ. Պարոն, ես ալ բող-
բելու եկած եմ:

ՇԻՔԱՆՈ. } Հակառակորդ կողմս
ԿՈՄՍՈՒՀԻ. } առջևնիդ կը տեսնէք:

ԷՆԹԻՄԷ. Ես ինչ կ'սպասեմ,
դատախազ մ'ալ ես ըլլամ:

ԿՈՄՍՈՒՀԻ. } Տէր իմ, պղտիկ դատ
ՇԻՔԱՆՈ. } մը բանալու համար
ԷՆԹԻՄԷ. } հոս եկած եմ:

ՇԻՔԱՆՈ. Ե՛հ, պարոններ, կար-
դու մեր իրաւունքները խօսինք:

ԿՈՄՍՈՒՀԻ. Քոն իրաւունքներդ:
Բողոք ըսելիքները խարտութիւններ
են:

ՏԱՆՏԻՆ. Ի՞նչ ըրին ձեզի:

ԿՈՄՍՈՒՀԻ. }
ՇԻՔԱՆՈ. } Նախատեցին, թշնա-
ԷՆԹԻՄԷ. } մանեցին:

ԷՆԹԻՄԷ. (Հարունակեչոյ:) Պարոն,
անոնցմէ աւելի ապտակ մ'ըն ալ ունիմ
կերած:

ՇԻՔԱՆՈ. Պարոն, քոսրդիներէդ
մէկուն հօրեղբորդին եմ:

ԿՈՄՍՈՒՀԻ. Պարոն, Հայր Քոս-
տոն իմ գործիս վրայ պիտի խօսի
ձեզի:

ԷՆԹԻՄԷ. Պարոն, զեղալաճատիդ
խորթ զուակն եմ:

ՏԱՆՏԻՆ. Չեր աստիճանները:

ԿՈՄՍՈՒՀԻ. Կոմսուհի եմ:

ԷՆԹԻՄԷ. Ասեմի հուրակ եմ:

ՇԻՔԱՆՈ. Քաղաքացի եմ. Պարոն-
ներ...

ՏԱՆՏԻՆ. (Տանիբն երգեն ներս բա-
շուեչոյ:) Խօսեցէք միշտ, երեքնիդ
ալ մտիկ կընեմ:

ՇԻՔԱՆՈ. Պարոն...

ԷՆԹԻՄԷ. Ուղածիդ չափ սցոսի:
Չէ՛ս տեսներ որ ժողովքէն կծիկը
դրու ան:

ԿՈՄՍՈՒՀԻ. Մեղք:

ՇԻՔԱՆՈ. Ի՞նչ, ունին դրութիւնը
արդէն ընցաւ. գեռ երկու խօսք խօ-
սելու ժամանակ չունեցայ:

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ԼԵՆՆՏԻ, (առան պաշտօնական գլխարկ)
ՇԻՔԱՆՈ, ԿՈՄՍՈՒՀԻ, ԷՆԹԻՄԷ.

ԼԵՆՆՏԻ. Պարոններ, զմեզ քիչ
մը հանդիստ պիտի թողո՞ւք:

ՇԻՔԱՆՈ. Պարոն, կրնամ ներս
մտնել:

ԼԵՆՆՏԻ. Չէ, պարոն, ամենին:

ՇԻՔԱՆՈ. Եւ ինչո՞ւ: Դամուան մը
մէջ գործս կը ընցընեմ. շատ շատ
երկու ժամ:

ԼԵԱՆՏԲ. Ներս մանել չըլար, պարոն:

ԿՈՄՍՈՒՀԻ. Աղէկ որ աս կուտարարին երեսին գուռը գոցեցիք: Բայց ես...

ԼԵԱՆՏԲ. Տիկին, ներս մանելու հրաման չկայ:

ԿՈՄՍՈՒՀԻ. Աղնիւ պարոն, ես պիտի մտնեմ:

ԼԵԱՆՏԲ. Գուցէ:

ԿՈՄՍՈՒՀԻ. Ապահով եմ:

ԼԵԱՆՏԲ. Պատուհանէն պիտի մանէք ուրեմն:

ԿՈՄՍՈՒՀԻ. Չէ, գուռէն:

ԼԵԱՆՏԲ. Տեսնենք:

ՇԻՔԱՆՈ. Բայց ես թէ որ մինչև իրիկուն հոս սպասեմ:

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ԼԵԱՆՏԲ, ՇԻՔԱՆՈ, ԿՈՄՍՈՒՀԻ,

ԷՆԹԻՄԷ, ԲԸԴԻ - ԺԱՆ.

ԲԸԴԻ - ԺԱՆ. (Լեւտարին.) Ի՛նչ կուզէ թող ընէ. իւր ձայնը մարդ պիտի չլսէ: Բռնեցի զինքը մտանին քովի ստորին սրահը խօթեցի:

ԼԵԱՆՏԲ. Հաղար խօսքին տեղ մի կխօսք. հայրս պիտի չկրնաք տեսնել. հասկցա՞ք:

ՇԻՔԱՆՈ. Աղէկ. բայց թէ որ բոլոր այս եղածներուն համար հետը տեսնուելու պէտք ունիմ: (Տանտէն մտնանին շուսանցոյցէն կերելի:) Սակայն ի՛նչ կը տեսնեմ: Ո՛հ, ասա երկինք զինքը մեզի կը խրկէ նորէն:

ԼԵԱՆՏԲ. Ի՛նչ. լուսանցոյցէն:

ԲԸԴԻ - ԺԱՆ. Ստանան փորը մտեր է աս մարդուն:

ՇԻՔԱՆՈ. Պարոն...

ՏԱՆՏԷՆ. Թշուառականը. եթէ այն չըլար. հիմայ գուրսն էի ես:

ՇԻՔԱՆՈ. Պարոն:

ՏԱՆՏԷՆ. Կորսուէ աչքիս աս ջնէն, էշ մարդ:

ՇԻՔԱՆՈ. Պարոն, կը բարեհաճի՞ք արդեօք...

ՏԱՆՏԷՆ. Ի՛հ, դուք ալ գլուխս կը ցաւընես ալ:

ՇԻՔԱՆՈ. Պարոն, ապսպրեցի որ...

ՏԱՆՏԷՆ. Չայնդ քաշէ, կը սենքերզի:

ՇԻՔԱՆՈ. Չեր տունը...

ՏԱՆՏԷՆ. Բանտը տարէք ասիկայ:

ՇԻՔԱՆՈ. Կէս քոռ դինի տանին:

ՏԱՆՏԷՆ. Ի՛հ, գինին ի՛նչ պիտի ընեմ:

ՇԻՔԱՆՈ. Հատ պատուական մշկահոս գինի մըն է:

ՏԱՆՏԷՆ. Գործդ նորէն ըսէ նա՞յիմ:

ԼԵԱՆՏԲ. (Էնթիմեին:) Հոս չորս կողմէն պատել պաշարելու է զանոնք:

ԿՈՄՍՈՒՀԻ. Պարոն, բոլոր ստուծիւններ պիտի զրուցէ ձեզի:

ՇԻՔԱՆՈ. Պարոն, ձեզի ճշմարիտը կը խօսիմ:

ՏԱՆՏԷՆ. Ո՛ւֆ, թող որ տիկինն ալ խօսի:

ԿՈՄՍՈՒՀԻ. Պարոն, մտիկ ըրէք ինձի:

ՏԱՆՏԷՆ. Ի՛հ, թող տուր որ շունչ առնում:

ՇԻՔԱՆՈ. Պարոն...

ՏՆՆՏԻՆ. Ձիս կը խղզիես, հոգիս
բերանս կը բերես, մարդ:

ԿՈՄՍՈՒՅԻ. Պարոն, աչքերնիդ ին-
ծի գարձուցէք:

ՏՆՆՏԻՆ. Տիկին, զիս կը խղզիես
ալ, կը խղզես:

ՇԻՔԱՆՍՈ. Քաշիտեղով կը տանի
զիս: Թող տուր, տիկին, պիտի խ-
նամ:

ԲՐԴԻ—ՃԱՆ. Իբրա որ երկուքնին
ալ մտանը մտած պիտի ըլլան:

ԼԷՆՏՏԲ. Շուտով վաղեցէք հոն,
օգնութի հասէք: Սակայն ես կը կար-
ծեմ որ պարոն Շիքանօն ներս մըտ-
նելէն վերջը մէյմընալ դուրս ելլե-
լիք չունի: Էնթիմէ, դուն այս բա-
նիս զգուշութիւն ընես:

ԷՆԹԻՄԻ. Գուք լուսանցոյցը պահ-
պանեցէք:

ԼԷՆՏՏԲ. Ինչ շուտով, ես կը պահ-
պանեմ:

ՏԵՍԱԲԱՆ ԺԲ.

ԿՈՄՍՈՒՅԻ, ԼԷՆՏՏԲ.

ԿՈՄՍՈՒՅԻ. Այն թշուառականը հի-
մայ դործը ուզածին պէս պիտի պա-
մէ: (Լուսանցոյցէն:) Պարոն, ըսածնե-
րուն ամենեկին հաւատ մի ընծայէք.
վկայ չունի, ստախօսին մէկն է:

ԼԷՆՏՏԲ. Ի՞նչ կը պօռաք անոնց,
տիկին, զուցէ՛ հոգիներն փչելու վը-
րայ են:

ԿՈՄՍՈՒՅԻ. Պարոն, հիմայ ուղա-
ծը պիտի հասկըցընէ անոր: Թող աը-
ւէք որ ներս մտնեմ:

ԼԷՆՏՏԲ. Լճանեկին. մարդ ներս
պիտի չի մտնէ:

ԿՈՄՍՈՒՅԻ. Շատ աղէկ կը տես-
նեմ, պարոն, որ մշկահոս գինին
ինչպէս հօրը՝ նոյնպէս որդւոյն մըտ-
քին վրայ ալ կը ներդործէ: Համբե-
րութիւն. թէ պարոն դատաւորին, և
թէ կէս-բոս գինինին գէմ ինչպէս որ
պէտք է բողբոս պիտի ընեմ:

ԼԷՆՏՏԲ. Գնա ասկից, կուտարար.
բաւական է որչափ որ գլուխնիս ցաւ-
ցուցիր: Աս որչափ խենդեր կան ե-
ղեր աշխարհիս վրայ: Ասանկ բարե-
կենդանի մը բնաւ հանդիպած չունի:

ՏԵՍԱԲԱՆ ԺԳ.

ՏՆՆՏԻՆ, ԼԷՆՏՏԲ, ԷՆԹԻՄԻ.

ԷՆԹԻՄԻ. Ո՞ր կը վաղէք, պարոն.
Ինքզինքնիդ վտանգի մէջ կը դնէք.
Վը տեսնեմ որ քալած ժամանակնիդ
կամաց մը կը կաղաք ալ:

ՏՆՆՏԻՆ. Գատելու կերթամ:

ԼԷՆՏՏԲ. Ի՞նչ կ'ըսես հայր իմ,
կ'ազաչեմ: Կեցիր նայինք, վէրքդ
պատել պէտք է: Շուտով վիրաբոյժ
մը բերէք:

ՏՆՆՏԻՆ. Թող վիրաբոյժը ատեան
գայ:

ԼԷՆՏՏԲ. Հայր իմ, կեցիր նայինք
.....:

ՏՆՆՏԻՆ. Վը հասկնամ միտքդ.
Ուզածիդ պէս զիս գարձընել կուղես,
այնպէս չէ: Ինծի համար՝ ալ ո՛չ ահ-
նածութիւն կը պահես և ո՛չ պատիւ.
Գատավճիռ մը անդամ չես ձդեր որ
հանեմ: Լճացուր ուրեմն ամէն բան.
սա դատաստանական դրութեանց տու-
րակն ալ ձեռքէս սոս ազատիմ:

ԼԵԱՆՏԻ. Կամայ, կամայ, հայր իմ, մ'աճաօյարեր: Կեցիր քեզի հեա իրաւախոհութիւն մ'ընենք: Այժմէ առանց դատելու կեանքը քեզի համար կեանք չէ՝ տանջանք է, եթէ արդարութիւն ընելու համար այսչափ մեծ եռանդ ունիս, այս բանիս համար քեզի տունէն դուրս ելլելու հարկ չիկայ: Պաշտօնդ մեր մէջը 'ի դործ դիր և մեր մէջը դատէ:

ՏԱՆՏԵՆ. Դատաւորութիւնը ծաղր չընենք, կը հասկնաս: Աս անանկ վեր 'ի վերոյ դատաւոր մը ըլլալ չեմ ուզեր:

ԼԵԱՆՏԻ. Ի՞նչ հակառակն անանկ մէկ դատաւոր պիտի ըլլաս, որ բարձրագոյն ատեանի մ'առջև քեզի դէմ բողոքել ալ չըլլալու է. թէ քաղաքական և թէ յանցաւորական դործերու դատաւոր: Այն օր երկու անգամ ատեան պիտի կազմես, և քու առջիդ ամէն բան դատաւճիռի առարկայ պիտի ըլլայ: Ծառայ մը անմաքուր դաւաթ բերա՞ւ մի՛ տուգանքի դատապարտէ. կոտրե՞ց մի՛ խարազանի:

ՏԱՆՏԵՆ. Ա՛հ, վերջապէս ատիկայ ալ բան մըն է: Գոնէ երբ դիմացինդ բանաւորութեամբ կը խորհի՛ դարձեալ ինչ և իցէ: Իսկ իմ նիստերս ո՞վ պիտի վճարէ: Ո՛չ ոք:

ԼԵԱՆՏԻ. Ունեցած տարեկաննին քեզի ապահովութեան զրաւական մը պիտի ըլլան:

ՏԱՆՏԵՆ. Բաւական պատշաճ կերպով կը խօսի, կարծեմ:

ԼԵԱՆՏԻ. Իրացիներէդ մէկուն դէմ . . .

ՏԵՍԱՐԱՆ ԺԴ.

ՏԱՆՏԵՆ, ԼԵԱՆՏԻ, ԷՆԹԻՄԷ,
ԲԸԴԻ_ՃԱՆ.

ԲԸԴԻ_ՃԱՆ. Բռնեցէք, բռնեցէք, բռնեցէք:

ԼԵԱՆՏԻ. (Էնթիմէին:) Ո՛հ, կարծեմ բանտարկեալնիս է որ կը փախչի:

ԷՆԹԻՄԷ. Չէ, չէ, այդ կողմէն վախ մի ունենար:

ԲԸԴԻ_ՃԱՆ. Այն բան կորսուած է. . . Չեր շունը. . . Սիդրոնը. . . մորթուած աղաղաղ մը յափշտակեց և կերաւ: Այս ինչ պատիժ շուն է. առջևը բան մը ապահով չէ, ինչ որ դանէ՛ կ'առնու կը տանի:

ԼԵԱՆՏԻ. Այլ. ահա հօրս համար աղէկ դատ մը, շուտով, ետեէն ինչ կէք, ամենքնիդ ալ վաղեցէք:

ՏԱՆՏԵՆ. Մեղմօրէն, շփոթութիւն գոռում դոչում մի հանէք: Առանց դըրդիւնի ատեան բերուած ամբաստանեալ մը ինչ ըսես կ'արժէ:

ԼԵԱՆՏԻ. Հա՛, հայր իմ, այս բանիս մէջ աղգու օրինակ մը տալ պէտք է: Խստութեամբ դատեցէք սա ընտանի դողը:

ՏԱՆՏԵՆ. Բայց դործը կ'ուզեմ հանդիսաւոր կերպով ընել: Արկու կողմէն ալ մէյմէկ փաստաբան ունենալ պէտք է, և մենք մէկ հատ մը անգամ չունինք:

ԼԵԱՆՏԻ. Հող չէ. կրնանք պատրաստել: Ահա դոնապանդ և քարտուղարդ. երկուքն ալ պատուական փաստաբաններ կ'ըլլան: Ախտակը աղի-

տութեան կողմանէ մէկմէկէ վար չեն մնար :

ԵՆԹԻՄԻ. Չէ, պարոն, չէ, ամենեւին, ես տէր դատաւորը քնացընելու ատեն չունիմ :

ԲԸԴԻ - ԺԱՆ. Իս իմ մասիս բան մը չեմ գիտեր, ինձմէ բան մի սպասէք :

ԼԵԱՆՏԻ. Ասիկայ ատջին դատող է, և քեզի վարել պիտի տանք :

ԲԸԴԻ - ԺԱՆ. Բայց ես կարդալ չեմ գիտեր :

ԼԵԱՆՏԻ. Ի՞նչ, հող չէ. քեզի թելադիր կըլլան :

ՏԱՆՏԻՆ. Երթանք պատրաստոււինք : Հա՛, պարոններ, խորհարութիւններ պէտք չէ հա : Աչուրներնիս ընծաներուն գողենք, ականջներնիս ալ որ և իցէ դազանի կուսակցութեան : Գո՛ւն թըգի - Ժան - փաստաբան, ամբաստանողը պիտի ըլլաս : Գո՛ւն ալ Լեւթիմէ - փաստաբան, ջատագովը :

ԱՐԱՐՈՒՆԹ ԵՐՐՈՐԸ

ՏԵԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԼԵԱՆՏԻ, ՇԻՔԱՆՈ, ՅՈՒՇԱՐԱՐ :

ՇԻՔԱՆՈ. Այո՛, պարոն, գործը պատմածիս պէս կատարեցին : Թէ նուիրակը և թէ քննիչը անձանօթ են ինձ : Խօսածներուս մէջ բնաւ սուտ մը չկայ :

ԼԵԱՆՏԻ. Այո՛, կը հաւատամ ձեզի. բայց թէ որ դուք ալ ինձի կը հաւատաք՝ կը խրատեմ զձեզ որ այս դատը մէկի թողուք : Պարաստեղը զանոնք երկուքն ալ նեղը ձգել կը յուսաք. անով աւելի ձեր հանդիսար պիտի վրդովէք : Չեր ինչքերուն երեք չորրորդ մասը արդէն ուրիշներուն քահաները լեցընելու վատնուեցան : Իւ նոյն իսկ ձեզի հակառակ դատի մը մէջ . . .

ՇԻՔԱՆՈ. Յիրաի ինձի փրկարար խորհուրդ մը կըտաք, պարոն, և որմէ, քիչ ըլլայ, կ'ուզեմ օգուտ քաղել : Բայց կ'ազաչեմ ձեզի որ իմ վրայօքս ազէկ յանձնարարութիւն մը ընէք : Բայտ որում ձեր Տանտէն դատաւոր հայրը հիմայ ունկնդրութիւն պիտի տայ, երթամ փութով մը աղջիկս բերեմ. Արնայ իրեն հարցուփորձներ ըլլուիլ. բնութեամբ անկեղծ է, և թերեւս ինձմէ ազէկ պատասխաններ կարենայ տալ :

ԼԵԱՆՏԻ. Գնա՛ բեր. արդարութիւն պիտի ըլլայ քեզի :

ՅՈՒՇԱՐԱՐ. Ի՞նչ զարմանալի մտոր :

ՏԵՍԱԲԱՆ Բ.

ԼԷԱՆՏԻ, ՅՈՒՇԱՐԱՐ.

ԼԷԱՆՏԻ. Կարգէ դուրս հնարք մը
կը բանեցնեմ. նայինք վերջը ո՛ւր պի-
տի երթայ. բայց հայրս յուսահատե-
լիք մարդ մըն է, ուստի պէտք է որ
սնտտի դատով մը իր աչքը խարենք.
Ասկէց զատ ես իմ գիտաւորութիւնս
ունիմ, և կ'ուզեմ որ դատապարտե-
այս խենդ մարդը, որ շարունակ խա-
բէութեամբ դատ վարելու համար ու-
նեցածը չունեցածը կը վատնէ: Բայց
անհասկի մեր մարդիկները բոլոր հոս
կըրգան:

ՏԵՍԱԲԱՆ Գ.

ՏԱՆՏԵՆ, ԼԷԱՆՏԻ, ԷՆՔԻՄԷ ԵՒ
ԲԸԴԻ - ԺԱՆ, (դաշտօսական ջգեստոյ):
ՅՈՒՇԱՐԱՐ.

ՏԱՆՏԵՆ. Ե՛՛հ, ի՛նչ էք դո՛ք հոս:
ԼԷԱՆՏԻ. Փաստաբաններն են,
հայր:

ՏԱՆՏԵՆ. (Յուշարարին): Եւ դո՛ւն:
ՅՈՒՇԱՐԱՐ. Իրենց շփոթած յիշու-
ղութեանը օղնելու եկած եմ:

ՏԱՆՏԵՆ: Կը հասկընամ: Եւ դո՛ւն:

ԼԷԱՆՏԻ. Ե՛ս: Ես ալ ժողովքն եմ:

ՏԱՆՏԵՆ. Սկսեցէք ուրեմն:

ՅՈՒՇԱՐԱՐ. Պարոններ. . .

ԲԸԴԻ - ԺԱՆ. Ե՛՛հ, դո՛ւն ալ, քիչ
մ'աւելի ցած խօսէ. թէոր այսչափ
բարձր ձայնով թելադիր ըլլաս՝ ինձի
լսող պիտի չըլլայ: Պարոններ. . .

ՏԱՆՏԵՆ. Գլուխդ գոցէ:

ԲԸԴԻ - ԺԱՆ. Ո՛հ, իմ. . .

ՏԱՆՏԵՆ. Գլուխդ գոցէ, կըսեմ:

ԲԸԴԻ - ԺԱՆ. Ո՛հ, պարոն, շատ
աղէկ գիտեմ թէ՛ «պատիւս արժա-
նաւորաց» պէտք է որ ընծայենք:

ՏԱՆՏԵՆ. Ուրեմն մի գոցեր գլու-
խդ:

ԲԸԴԻ - ԺԱՆ. (Գլխօրկց գեղջոյ): Պա-
րոններ. . . (Յուշարարին): Դո՛ւն
ծանր դնա. ամենէն աղէկ գիտցածս
ճառիս սկզբնաւորութիւնն է: Պա-
րոններ, երբ ուշի ուշով կը գիտեմ
այս աշխարհիս անհաստատութիւնը և
անոր փոփոխականութիւնը, երբ այն-
չափ զանազան և տարբեր մարդերու
մէջ այնչափ թափառական աստղեր կը
տեսնեմ, և մէկ հաստատուն աստղ
մը չեմ տեսներ, երբ կը տեսնեմ
Կեսարները, կը տեսնեմ անոնց բաղ-
դը, երբ կը տեսնեմ արևը, կը
տեսնեմ լուսինը, երբ կը տեսնեմ
Աբելաղուց (Բաբելաղուց) երկիրները
Տարսից (Պարսից) ձեռքէն Ադելիոնա-
ցուց (Մակեդոնացուց) ձեռքն անցած:
Երբ կը տեսնեմ Հոռովայեցիները
(Հոռովայեցիները) տիրապետական կա-
ռավարութենէ՛ ուսկապետականի ան-
ցած, և անկէց ալ միապետականի:
Երբ կը տեսնեմ Ճափոնը:

ԷՆՔԻՄԷ. Ըս մեր փաստաբանը երբ
ամենն ալ պիտի տեսնէ:

ԲԸԴԻ - ԺԱՆ. Վ՛այ. ինչո՛ւ ասիկայ
իմ խօսքս ընդմիջեց, ես ալ չեմ խօ-
սիր:

ՏԱՆՏԵՆ. Դո՛ւն, անհանգարտ
փաստաբան, ինչո՛ւ չես թողուր որ իր
ճառը լինցունէ: Արիւն քրտինք մը-
տած էի տեսնելու համար թէ՛ խօսքը
Ճափոնէն աղաղաղին դործին աղէկ

պիտի բերէ մի , և դռն սնտի դը-
րուցով մը կելեա կ'ընդմիջեա զանի :
Խօսէ ուրեմն փաստարան :

ԲԸԳԻ - ԺԱՆ . Խօսքիս թե՛լը կոր-
սնցուցի ալ :

ԼԵԱՆՏԲ . Լնցուր , Բըդի - Ժան .
սկիզբը շատ աղէկ գնաց : Բայց ինչո՞ւ
համար թեկերդ այդպէս երկու կողմդ
կախուած կը թողուս . ոտքերուդ վրայ
արձանի պէս շիփ - շիտակ կեցեր ես :
Հա՛ թնդա՛ քիչ մը . քաջութիւն , աշ-
խատէ նայինք :

ԲԸԳԻ - ԺԱՆ . (Թեւեքք օրեշու՛ք :) Երբ
. . . . կը տեսնեմ երբ
կը տեսնեմ

ԼԵԱՆՏԲ . Բսէ՛ ուրեմն թէ ինչ կը
տեսնես :

ԲԸԳԻ - ԺԱՆ . Բայց ինչպէս ըսեմ :
Միևնոյն ժամանակ երկու նապաստա-
կի ետեէ վազել չըլլար , “ Երկու
ձմեռուկ՛ չ'առուր մէկ բաղուկ ” կ'ը-
սեն :

ՅՈՒՇԱՐԱՐ . Կը կարգանք . . .

ԲԸԳԻ - ԺԱՆ . Կը կարգանք . . .

ՅՈՒՇԱՐԱՐ . Կերպարանափոխութեան
.

ԲԸԳԻ - ԺԱՆ . Ինչպէ՛ս . . .

ՅՈՒՇԱՐԱՐ . Կերպարանափոխութեան
մէջ . . .

ԲԸԳԻ - ԺԱՆ փոխութեան

մէջ . . .

ՅՈՒՇԱՐԱՐ . Որ հոգե . . .

ԲԸԳԻ - ԺԱՆ . Որ հոգե . . .

ՅՈՒՇԱՐԱՐ . Փոխութիւնը . . .

ԲԸԳԻ - ԺԱՆ . Փոխութիւնը . . .

ՅՈՒՇԱՐԱՐ . Ո՛հ , այս ինչ անբան է :

ԲԸԳԻ - ԺԱՆ . Որ այս ինչ անբա-
նըն է :

ՅՈՒՇԱՐԱՐ . Տակախն . . .

ԲԸԳԻ - ԺԱՆ . Տակախն . . .

ՅՈՒՇԱՐԱՐ . Ե՛՛շ . . .

ԲԸԳԻ - ԺԱՆ . Ե՛՛շ . . .

ՅՈՒՇԱՐԱՐ . Գրաստ . . .

ԲԸԳԻ - ԺԱՆ . Գրաստ . . .

ՅՈՒՇԱՐԱՐ . Շուտիկը ասանի ա-
սանկ փաստարանը :

ԲԸԳԻ - ԺԱՆ . Շուտիկը քեզի տա-
նի . սուոր նայէ մէյով , որ իր մեծ
պահքի կախարդ դէմքովը հոս եկեր է
ու մարդ չի հաւնիր : Մինչև գծովք
ճամբայ ունիս , մարդ . կորսուէ՛ գնա՛
այս տեղէն :

ՏԱՆՏԵՆ . Գունալ գործին եկուր
փաստարան . խօսք մ'ալ գործին վրայ
խօսէ նայինք :

ԲԸԳԻ - ԺԱՆ . Ե՛՛հ , պէտք է մի այն-
չափ երկար բարակ ձևեր ու շրջաններ
բանեցընել . ինձի կանդունաչափ բա-
տեր խօսիլ կուտան , այնպիսի խո-
շոր - խոշոր բառեր՝ որոնք ասիէց մին-
չև չղխեմ ո՛ւր պիտի երթան : Ես ,
շիտակն ըսեմ , այնչափ ձևեր չեմ՝
զիտեր ըսելու համար թէ ասիէ քիչ
մը առաջ շունին մէկը մարթուած ա-
զաղաղ մը առաւ փախաւ : Մեր դոր-
ծին դալով աս իրաւ է որ ձեր շունը
բան չթողուր որ չչափշտակէ , ինչպէս
որ հիմայ ալ խոհանոցին մէջ Սանտէն
եկած մորթուած ազաղաղը կերաւ
լափեց . և ասիէց վերջը առաջին ան-
գամ որ զանիկա հոն տեսնեմ՝ իւր
դատը լմնցած է , և աղէկ ծեծ մը քա-
շելով պիտի սատկեցընեմ :

ԼԵԱՆՏԲ . Շխտակը , իւր յառաջա-
բանին արժանի գեղեցիկ վերջարան՝

ԲԸԴԻ - ԺԱՆ . Միտքս չհասկըցուցի մի , դուն ան նայէ : Աթէ դէմ խօսող կայ՝ թող երեան ելլէ :

ՏԱՆՏԻՆ . Վ կաները կանչէ :

ԼԵԱՆՏԻ . Ըղէկ ա , թէոր կարենայ վկայ բերել : Վ կաները սուղ կ'ըլլան , և ամէն ուղող չկրնար դտնել գտնոնք :

ԲԸԴԻ - ԺԱՆ . Սակայն մենք ունինք , և անմերժելի վկայներ :

ՏԱՆՏԻՆ . Բեր նայինք ուրեմն :

ԲԸԴԻ - ԺԱՆ . Վրպանիս մէջն են : Ահա ազաղաղին գլուխն ու ոտքերը : Տեսէք և դատեցէք :

ԷՆԹԻՄԷ . Չեմ ընդունիր զանոնք , կը մերժեմ :

ՏԱՆՏԻՆ . Ըղէկ , բայց ինչ պատճառ յառաջ բերելով չպիտի ընդունիս :

ԷՆԹԻՄԷ . Պարոն , Մանսէն եկած են անոնք :

ՏԱՆՏԻՆ . Ստոյգ է որ Մանսէն ազաղաղներուն տասներկուքը մէկ կըզայ :

ԷՆԹԻՄԷ . Պարոններ . . .

ՏԱՆՏԻՆ . Ախ և յառաջ ըսէ ինձ փաստաբան , երկար պիտի խօսիս :

ԷՆԹԻՄԷ . Բանի մը պատասխանաւորու չեմ ըլլար :

ՏԱՆՏԻՆ . Ընկերդ է բնութեամբ :

ԷՆԹԻՄԷ . (Միւշեւ զերջը ձայնը սաստիկ սուրցընեցոյ :) Պարոններ , ամեն ինչ որ կրնայ յանցաւոր մը դողացընել , ամեն ինչ սարսափելի բան որ ունին մահկանացուք , այս անգամ մեզի դէմ մէկ եկած կ'երևի . ըսել կ'ուզեմ գաղտնի կուսակցութիւնը և ճարտարախօսութիւնը : Բայտ սրուի ,

մէկ կողմէն վախճանելոյն յարգն ու վարկը զիս կը վախցընէ , միւս կողմէն մեր Բըդի - Ժան փաստաբանին ուժղին ճարտարախօսութիւնը զիս կը հիացընէ :

ՏԱՆՏԻՆ . Փաստաբան , դուն ալ ձայնիդ ուժղնութիւնը քիչ մը մեղմէ :

ԷՆԹԻՄԷ . (Սոջորական ձայնով :) Այո՛ , այո՛ , զլխուս վրայ . իմ քովս շատ տեսակ ձայներ կան . . . (Հեշտ ձայնով մը :) Բայց ինչ անվստահութիւն՝ որ բնականապէս կըտայ մեզի վերոյիշեալ վարկը , և վերոյիշեալ ճարտարախօսութիւնը , ի վերայ այսր ամենայնի ձեր բարութեանց խաբիսիւր , պարոններ , մեր սրտերը կ'ապահովցընէ : Բաց յայսմանէ Մեծին Տանտէնի առջև անմեղութիւնը համարձակ է և անխռով . այո՛ , Ստորին - Արմանախոյ այս իմաստուն Պատոնին առջև , այս արդարութեան արեգակին՝ որուն փայլը երբէք աղօտացած և նսեմացած չէ , ճշմարտութիւնը և իրաւունքը յաղթող և բարձր 'ի դըլուխ կը պանծայ միշտ :

ՏԱՆՏԻՆ . Ստուգիւ , աղէկ դատ կը վարէ :

ԷՆԹԻՄԷ . Ուստի , առանց բանէ մը երկիւղ ունենալու՝ խօսքիս թելը ձեռք կ'առնում , և կըզամ իմ պաշտպանած դատիս : Ախ և առաջ՝ Արխատոտէլ իր Բըդի Բօլիլիօնի մէջ շատ աղէկ կ'ըսէ թէ . . .

ՏԱՆՏԻՆ . Փաստաբան , դործը ազաղաղի մը վրայ է , և չէ թէ Արխատոտէլի և իր Քաղաքականութեանը :

ԷՆԹԻՄԻ. Այ՛, բայց Արիստո-
տէլի Ռերիբատէաիբեան այսինքն
ճեմական փիլիսոփայութեան վկայու-
թիւնը կը հաստատէ թէ՛ բարին և
չարը . . .

ՏՆՍՏԵՆ. Արիստոտէլ ասոր մէջ
բան չունի կարծեմ: Գործին եկուր:
ԷՆԹԻՄԻ. Պաւսանիաս իր Արիս-
տէլէրոն մէջ . . .

ՏՆՍՏԵՆ. Գործին:

ԷՆԹԻՄԻ. Կը հերքէ, կը մերժէ. . .

ՏՆՍՏԵՆ. Գործին, գործին ե-
կուր, կ'ըսեմ:

ԷՆԹԻՄԻ. Մեծն Զաղովուս . . .

ՏՆՍՏԵՆ. Գործին եկուր, գոր-
ծին, գործին:

ԷՆԹԻՄԻ. Հարմեհոփուլ իր Բրոթի-
դի-ա'րիո-մ ձի-րիւ չէ վիլիպի մէջ . . .

ՏՆՍՏԵՆ. Օ՛Ֆ, հիմայ վճիռդ
պիտի հանեմ հա:

ԷՆԹԻՄԻ. Ո՛հ, այդչափ նեղբիրտէք
եղիբ: Ահաւասիկ գործին եղելութիւնը:
(Շուտ շուտ) Շուն մը խոհանոցը
կ'երթայ, հոն մտրթուած ազդազ մը
կը գտնէ, որ աղէկ տեսք ունէր: Արդ
այն՝ որուն ի նպաստ կը խօսիմ, սաս-
տիկ անօթցած է. իսկ այն՝ որուն հա-
կատակ կը խօսիմ, փետուրները փեթ-
տուած: Աւասի այն՝ որուն կողմէն կը
գտնուիմ, զազոռիկ մը կը յափշտակէ
զայն՝ որուն հակառակ կը խօսիմ:
Վճիռ կը տրուի, և յանցաւորը կը
բռնուի: Երկու կողմէն փաստաբան-
ներ կ'ընտրուին: Օր կորոշուի:
Պարտքս էր խօսիլը, կը խօսիմ, խօ-
սեցայ:

ՏՆՍՏԵՆ: Օ՛հ, զ՛հ, զ՛հ, զ՛հ, զ՛հ,

զ՛հ: Գործ մը տեղեկացրնելն ալ ա-
սանկ կ'ըլլայ: Մէկ սասկ շննիբ ո-
չինչ բաները կ'երկընցնէ ու կ'երկըն-
ցընէ, և երբ որ բուն եղելութեան
կըզայ՝ սուրհանդակի պէս արշաւասոյր
վազել կսկսի:

ԷՆԹԻՄԻ. Բայց գեղեցիկը առաջինն
էր, պարոն:

ՏՆՍՏԵՆ. Տղեղն էր ըսէ: Այս
կերպով դաս վարել տեսնուած է մի:
Բայց ծողովքն ինչ կ'ըսէ ասոր:

ԼԵՍՏՏՐ. Շատ պատուական է:

ԷՆԹԻՄԻ. (Սաստիկ եւ ուժգին ձայնով
մը) Ինչ կը պատահի, պարոններ:
Արդան: Ինչպէս կըզան: Իմ պաշտ-
պանեալը կը հալածին: Տուն մը բըռ-
նութեամբ կը բանան: Ո՞ր տունն է
բռնութեամբ բայածնին: Այոյն իսկ
մեր դատաւորին տունը: Մեղի պա-
տըսպարան եզոզ մասանին դժուր կը
խոբտակեն: Չ՛մեղ զո՞ղ և յափշտակիչ
կը հրատարակեն: Չ՛մեղ կը քաշեն կը
տանին, մեր ամբաստանիչներուն,
Պարոն Բըզի Ժան փաստաբանին
ձեռքը կը մատնեն (1): Օրէնքէն ալ

(1) Պատարանները ընդհանրապէս տ-
գորութիւն մ'ունին որ իրենց պաշտպանե-
լոյն դատը վրանին առած ժամանակին
խորընթանալով մէջ խօթելով փոխանակ
եղբորը գէմը գործածելու կ'սկսին յարա-
կի առաջին գէմը գործածել, և Քեօսով,
Քեօվ, Քեօվ և այն խօսիլ, որպէս թէ ե-
լած գործողութեանց մէջ իրենք ալ մտ-
նակցութիւն ունեցած ըլլային: Ասոր հա-
մար հեղինակը՝ հաս տեղ շան պաշտպան-
փաստաբանը եզոզ Էնթիմիին այս ձեռով
խօսել տալով զանիկայ շունին հետ մէկ կը-
նէ, որ խիտ ծաղրելի եկած է:

վկայութիւն կը բերեմ ձեզի, պարոն-
ներ: Ա՛վ չղիտեր թէ Նաաիւն Օրի-
նադիրքը, Ա՛ խաչի խաչի օրէնքը,
Տ՛ լի օրէնքը, անոր մէկ տուն վա-
րը, և Քա՛նօնիօն օրէնքը յայտնա-
պէս այս զեղծման հակառակ են: Աւ-
եթէ ստոյգ ալ ըլլայ, պարոններ, որ
Սիդրոն, իմ պաշտպանեալս, վերա-
յիշեալ ազազազը բոլորովին կամ
մասամբ իւր կերած է, թող բազ-
դատութեան տակ գրուի անգամ մը
թէ ինչէր ըրած ենք մենք այս գործս.
զուեթեանէն առաջ: Ա՛րբ, ե՛րբ, իմ
պաշտպանեալս կշտամբուած է երբէք:
Ար՞ն ձեռքով մինչև հիմայ ձեր տու-
նը պահպանուեցաւ: Ա՛րբ արդեօք
գողը եկած ժամանակ չ՛հաչեցինք:
Վ՛կայ ըլլան այն դատատանի մէջ
փոխանորդութիւն վարող երեք պաշ-
տօնեայները՝ որոնց պատմութեանները
բզզիկ բզզիկ ըրաւ սոյն այս Սիդրո-
նը: Անոնց կտորուանքները ամեն ժա-
մանակ կրնաք տեսնել: Անոնցմէ զատ
զմեզ արդարացընելու համար ուրիշ
բան կ'ուզէք մի:

ԲԸԻԻ - ՃԱՆ. Ա՛գամ իրաւագէտը...
ԵՆԹԻՄԷ. Հանգարա թող զմեզ:
ԲԸԻԻ - ՃԱՆ. Ինձ իմէն...
ԵՆԹԻՄԷ. Օ՛մեզ հանգարա թող,
կ'ըսեմ:
ԲԸԻԻ - ՃԱՆ. Ա՛յնչափ պոռայ՝ որ
ձայնը կը քաշուի:
ԵՆԹԻՄԷ. Հանգարա թող զմեզ,
մարդ: Աս ինչ զլիտուցաւ է եղեր:
Ի՛օՖ, է՛օՖ:
ՏԱՆՏԷՆ. Փաստաբան, քիչ մը
հանգիստ առ և լննցուր ա՛լ:

ԵՆԹԻՄԷ. (Մանր ձայնով մը) Իսկ
արդ ուրեմն, մեղի, թոյլ, տրուի, որ
չունչ, առնենք, և, խօսքերնիս, չեր-
կընցընելու ալ, արդ ելք. դրուի: Աս
հիմայ, առանց, բան մը, մտնալու, և
առանց, իմ փաստաբանական, պաշ-
տօնիս, պարտուցը գէմ, գործելու,
համառօտիւ մի, պիտի յայտնեմ, բա-
ցատրեմ, և աչքերնուդ, առջև դնեմ, իմ
գատիս, և նոյնին մէջ, պարունակուած,
պարտղաներուն, ընդհանրական, գա-
ղափարը:

ՏԱՆՏԷՆ. Բոլոր գործը քսան ան-
գամ կրկնելով աւելի շուտ կ'ընէր՝
քան թէ մէկի համառօտելով: Ա՛վ
դուն, մարդ ես, սատանայ ես, ինչ
ես, լննցուր խօսքդ. աս ինչ պատիժ
էր որ դու խնիս ելաւ:

ԵՆԹԻՄԷ. Հիմայ կը լննցունեմ.
ՏԱՆՏԷՆ. Հա՛ նայինք:
ԵՆԹԻՄԷ. Ա՛շխարհիս ստեղծուելէն
յառաջ...
ՏԱՆՏԷՆ. (Յօրանցեցով) Ա՛հ,
փաստաբան, ջրհեղեղին անցնինք:

ԵՆԹԻՄԷ. Ուրեմն, աշխարհիս ըս-
տեղծուելէն և արարչագործուելէն յա-
ռաջ կ'ըսեմ, երկիր, տիեզերք, ամէն
բան, և բովանդակ բնութիւնը, նիւ-
թին խորը թաղուած էր: Տարերքնե-
րը, հուրը, օդը, ջուրը, հողը, ըն-
կըղմած և իրարու վրայ դիզուած՝ ա-
հագին շեղջ մը, ահագին կոյտ մը կը
կազմէին, խառնակութիւն մը, անձև
և անկերպարան զանգուած մը, ան-
կարգութիւն մը, վիճ մը, և սոսկալի
տակնուվրայութիւն մը: “ԵՒ ԷՐ Ա-
ՄԵՆԱԻՐԵՔ ՏԵՍԱՐԱՆ ՏԻԵՋԵՐԱՅ ԱՆ.

ԿԱԶՄ ԵՒ ՄԻՕՐԻՆԱԿ, ՋԵՆՅՈՒՆԵԾ
ԹԱՆՁՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՌՆԱԿՈՒԹԵԱՆ
ՋՈՐ ՅՈՏՆԻ ԲԱՌՍՆ ԿԱԶԻՆՆ՝ : Ինչ-
պէս որ կըսէ Ովեղիոս իր Այլ-Կի-
ր-Ինչոյն մէջ :

(Տառերն ընտրած ըստ ինչոյն :)

ԼԵԱՆՏԻ. Ո՛Տ, ան ինչպէս ինչպէս :
Հայր իմ, հայր իմ :

ԲԸՒԻ-ԺԱՆ. Ո՛Տ, պարոն, ինչ-
պէս ալ կը քնանայ :

ԼԵԱՆՏԻ. Արթնցիք, հայր իմ, ար-
թընցիք, աչքդ բաց անդամ մը :

ԲԸՒԻ-ԺԱՆ. Մեռեր ես, պարոն,
ինչ եղեր ես :

ԼԵԱՆՏԻ. Հայր իմ, հայր իմ :

ՏԱՆՏԵՆ. Ի՛Տ, է՛Տ, է՛Տ, ինչ
կայ, ինչ եղաւ : Ո՛Տ, ինչ մարդ էր
անիկայ : Յիրաւի կ'ըսեմ, ասանկ ա-
ղէկ քուն մը քաշած չէի երբէք :

ԼԵԱՆՏԻ. Հայր իմ, վճիռ տալ
պէտք է :

ՏԱՆՏԵՆ. Թող թին խրկուի :

ԼԵԱՆՏԻ. Շուն մը թին խրկուի :

ՏԱՆՏԵՆ. Շիտակն ըսեմ, ես ան
բան մը չեմ հասկնար : Այն աշխարհ-
քէն, քառսէն, չեմ գիտեր ինչէն՝ գը-
լուխս խեղք մնաց որ : Ի՛Տ, ընցնուր,
վերջը բեր նայինք, փաստարան :

ԷՆԹԻՄԵ. (Անոր շունի ձագերն են-
կայացնելու շուրջ :) Եկէք՝ վշտահար ըն-
տանիք, եկէք՝ խեղճ ձագուկներ, որ
որր ձգել կ'ուզեն, եկէք, ձեր ման-
կական խեղքովը դուք ալ խօսեցէք :
Այո, պարոններ, կը տեսնէք մեր
Թշուառութիւնը : Որք ենք մենք, մեր
հայրը մզի գարձուցէք, մեր հայրը՝
որմէ ծնանք, մեր հայրը՝ որ զմեզ . . .

ՏԱՆՏԵՆ. Ասէք, դուք հանկէք,
դուք հանկէք սըւոնք :

ԷՆԹԻՄԵ. Մեր հայրը, պարոններ
.

ՏԱՆՏԵՆ. Դուք հանկէք կ'ըսեմ :
Աս ինչ ազմուկ է որ կը հանեն. չորս
կողմն ալ միգեցին :

ԷՆԹԻՄԵ. Պարոն, տեսէք մեր ար-
ցունքները

ՏԱՆՏԵՆ. Այո, այո, իմ սիրտս
ալ ելաւ և կարեկցութեամբ լեցուե-
ցաւ : Տեսէք ինչ բան է պատեհ ժա-
մանակին կրից թելերուն գալիլը :
Հիմայ ձեռքերս կապուեցան : Թէեւ
ճշմարտութիւնը զիս կը հարկադրէ,
թէեւ յանցանքը սառուղուցաւ, և նոյն
իսկ ինքը կը խոստովանի զայն, այլ
սակայն եթէ յանցաւորը դատապար-
տենք՝ անկէ ծագելիք կնճխուն ալ
հաւասարապէս մեծ է. ըստ որում
այսչափ մատաղ ձագուկներ որք՝ և
աղքատանոցի կարօտ ձգելն ալ մեզք
բան է և չըլար : Բայց հիմայ դորժ
ունիմ, մարդու երես տեսնել չեմ
ուզեր :

ՏԵԱՄԱՆ Գ.

ՏԱՆՏԵՆ, ԼԵԱՆՏԻ, ՇԻՔԱՆՕ,
ԻԶԱՊԵԼ, ԲԸՒԻ-ԺԱՆ, ԷՆԹԻՄԵ.
ՇԻՔԱՆՕ. Պարոն
ՏԱՆՏԵՆ. (Բեղի-ժամին և Էնթի-
մին :) Այո, ձեզի միայն ունկնդրու-
թիւն կը տրուի : Արթաք բարե :
(Շիրակոսին :) Բայց ըսէ ինձ ո՞վ է
այդ աղջիկը :
ՇԻՔԱՆՕ. Իմ աղջիկս է, պարոն :

ՏԱՆՏԵՆ. Ե՛՛՛՛՛, շուտով կանչէ մի
մը նայի՛նք :

ԻԶԱՊԵԼ. Բայց հրամանքնիդ գործ
ունէիք, պարոն :

ՏԱՆՏԵՆ. Ե՛՛՛՛՛, ես գործ չունիմ :
(Էրբանոյիս :) Ի՛նչո՞ւ համար չէիք ը-
սեր թէ իր հայրն ես :

ՇԻՔԱՆՕ. Պարոն

ՏԱՆՏԵՆ. Աղջիկդ քու գործդ քեզ
մէ աղէկ գիտէ : (Եզադեչին :) Բ՛սէ
նայիմ, աղջիկս ո՛՛՛՛ ի՛նչ սիրուն
և ի՛նչ անուշ աչուրներ ունի : Բայց
ատիկայ բաւական չէ՛՛՛՛՛ աղջիկս, իմաս-
տութիւն ալ ունենալ պէտք է : Շի-
տակը, այս թարմ և չքնաղ ծաղիկը
տեսնելուս սիրտս չափազանց բերկ-
րեցաւ : Գիտե՞ս որ կնքահայր էի ես
ժամանակաւ : Մեր վրայ այնչափ կը
խօսուէր որ :

ԻԶԱՊԵԼ. Ո՛՛՛՛՛, կը հաւատամ, պա-
րոն :

ՏԱՆՏԵՆ. Բ՛սէ մեզի, որո՞ւ կուզես
որ դատը կորսնցունել տանք :

ԻԶԱՊԵԼ. Եւ ո՛չ մէկու մը :

ՏԱՆՏԵՆ. Քեզի համար ամէն բան
կ'ընեմ. խօսէ ուրեմն աղջիկս :

ԻԶԱՊԵԼ. Պարոն, շատ շնորհա-
պարտ եմ ձեզի :

ՏԱՆՏԵՆ. Ա՛մբաստանեալի մը տան-
ջանքի դրուիլը տեսած չե՞ս երբէք :

ԻԶԱՊԵԼ. Ո՛՛՛՛՛, պարոն, և կարծեմ
բոլոր կենացս մէջ ալ չպիտի տես-
նեմ :

ՏԱՆՏԵՆ. Եկուր որ անոր համը քե-
զի ալ առնել տամ :

ԻԶԱՊԵԼ. Ո՛՛՛՛՛, պարոն, գժբաղդ-
ներու քաշածները տեսնելով մար-
դուն սիրտը կը դիմանայ :

ՏԱՆՏԵՆ. Ե՛՛՛՛՛, միշտ մէկ երկու
ժամ կանցունէ ան, դուն ան նայէ :

ՇԻՔԱՆՕ. Պարոն, հոս դալուս
պատճառը այն է որ

ԼԵԱՆՏԻ. Հայր իմ, կեցիք երկու
խօսքով գործը ձեզի հասկըցընեմ :
Խնդիրը ամուսնութեան մը վրայ է :
Եւ նախ և առաջ սա պիտի դիմնաք որ
ամէն բան լինցած է : Աղջիկը շատ ա-
ղէկ կ'ուզէ, սիրողն ալ սրտանց կը
փափաքի : Հիմայ դատելը ձեզի կ'իջ-
նայ :

ՏԱՆՏԵՆ. (Ետին տեցը նստեցոյ :)
Ե՛՛՛՛՛, շուտով մը կարդեցէք. եթէ
կ'ուզեն՝ վաղը, և եթէ հարկ է՝ այ-
սօր :

ԼԵԱՆՏԻ. Օրիորդ, ուրեմն աս
քու սկեսրայրդ, ողջունէ զանի :

ՇԻՔԱՆՕ. Ի՛նչպէս :

ՏԱՆՏԵՆ. Այդ ինչ գաղտնիք է՛
չեմ հասկնար :

ԼԵԱՆՏԻ. Հայր, ինչ որ ըսիք՝ կէտ
առ կէտ ՚ի գործ պիտի դրուի :

ՏԱՆՏԵՆ. Որովհետև վճուեցի,
վճիոս ետ չեմ առնուր :

ՇԻՔԱՆՕ. Բայց մարդ՝ առանց իր
աղջկան հաւանութիւնը առնելու չի
կրնար զան մէկու մը տալ :

ԼԵԱՆՏԻ. Անտարակոյս, և ես սի-
րուն Իզապելի վրայ վստահ եմ :

ՇԻՔԱՆՕ. Համր ես, աղջիկ, ին-
չո՞ւ չես խօսիր. խօսէ նայի՛նք :

ԻԶԱՊԵԼ. Հայր իմ, այս որոշման
դէմ բողոքել չեմ համարձակիր :

ՇԻՔԱՆՕ. Ես կը բողոքեմ, մի
վախնար :

ԼԵԱՆՏԻ. (Թուցթ մը ցուցնելոյ տեսք :)

Տեսէք սա թուղթը . ձեր ստորագրու-
թեան դէմ բողոքած չի պիտի ըլլաք:
ՇԻՔԱՆՈ . Ինչ ըսիք:

ՏԱՆՏԻՆ Խիստ օրինաւոր գրուած
դաշնագիր մըն է սա:

ՇԻՔԱՆՈ . Կը տեսնեմ որ զիս հը-
նարքով խաբեր են, բայց հոգ չէ,
ես իմ ընելիքս զիտեմ: Ասիկայ քսա-
նէն աւելի դատերու աղբիւր պիտի
ըլլայ ինձ համար: Թող ազջիկս առ-
նեն, հաւանութիւն կըտամ, բայց
քսակիս չեն կրնար գպչիլ:

ԼԵՆՆՏԻ . Բայց, պարոն, ձեզմէ
բան ուզող եղան մի: Աղջիկնիդ մեզի
թող տուէք, և ինչքերնիդ ուզած,
սուր չափ պահեցէք:


ՇԻՔԱՆՈ . Այդպէս հա՞:

ԼԵՆՆՏԻ . Հայր, տուած ունկըն-
դրութիւննէդ դճէք մի:

ՏԱՆՏԻՆ . Անտարակոյս: Գատերը
թող ստատութեամբ գան և ես մնա-
ցած օրերս ձեզի հետ կ'անցունեմ:
Բայց ասկէց վերջը փաստաբանները
աւելի կարճ խօսին: Իսկ մեր յան-
ցարը:

ԼԵՆՆՏԻ . Ա՛լ միայն ուրախալի
բաներու վրայ խօսինք, հայր: Աը-
նորհք, շնորհք, թողութիւն տուէք
անոր:

ՏԱՆՏԻՆ . Ի՛հ, շատ աղէկ, թող
ձամբայ դրուի: Հմբաս, բոլոր ինչ
որ կընեմ՝ քեզի համար են: Երթանք
յոդնութիւննիս առնենք ուրիշ դա-
տեր տեսնու:



2393

2013

